Մաղաքիան գրում է մոնղոլական արշավանքների, նրանց կատարած ավերմունքների մասին, հաղորդում է տեղեկութիւններ՝ մոնղոլների վարած քաղաքականութեան, հարկային սխտեմի և Հայաստանի տնտեսական կյանքի մասին: Մաղաքիան իր պատմութիւնը հասցնում է մինչև 1275 թվականը:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

965. Մաղաքիայ Արեղայի պատմութիւն վասն Աղղին Նետողաց: Ի լոյս ընծայեաց Ք. Պ.: Մ. Պետերբուրգ. 1870. 64 էջ:

966. Պատմութիւն թաթարաց: Երուսաղեմ. 1870. 76 էջ. [ուլյա է տեսել Վարդան Պատմիչի անունով]:

ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

967. История монголов инока Магаки, писателя XIII века. Перевод и Об'яснения К. П. Патканова. С. Петербург. 1871. 106 стр.

ՌԻՍՈՒՍՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

968. Ալիշան Ղ.—Հայաստանում. պատմիչք և պատմութիւն հայոց: Վենետիկ. 1901. էջ 109—110:

969. Զամինյան Ա.—Հայ գրականության պատմութիւնը
Նոր-Նախիջևան, 1914, էջ 205:

970. Զարպիսնալյան Գարեգին.— Պատմութիւն հայերեն
գիրութեան: Հտ. Բ. Նոր մատենագրութիւն: Բ. տպագ. Վենետիկ.
1878, էջ 149—153:

971. Ոսկյան Հ.—Մաղաքիա Արեղայի «Պատմութիւն վասն
Աղղին Նեոտոյոյ»: Հանդ. Ամս. 1922, էջ 222—226:

972. Զամչյան Ա.— Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի
մինչև ցամ տեառն 1784. ըստ աւանդելոյ ալլեալ մատենագրաց.
ի վեց դիրս բովանդակեալ, և յերիս հատորս տրոհեալ: Վենետիկ.
1784. Ա. հտ. էջ 16. Գ. հտ. էջ 187:

ՀԵԹՈՒՄ Բ. ԹԱԳԱՎՈՐ

Կիլիկիայում, 13-րդ դարում թագավոր է եղել Հեթում Բ.,
որ իր հիշատակարանի մեջ տալիս է իր նախնիներին, Ռուբի-
նյաններին համառոտ պատմութիւնը, Եգիպտոսի սուլթանի ար-
շավանքը և Անտիոքի գրավումը, Կիլիկիայի դրութիւնը: Հիշա-
տակարանի մեջ ունի հանգավոր կտորներ:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

973. Սուլտանն Եգիպտոսի գրաւէ գկալուածս փրանկաց յա-
սորիս [չափածո]. Ալիշան Ղ., Հայապատում. պատմիչք և պատ-
մութիւն հայոց: Վենետիկ. 1901, էջ 499—500:

974. Յիշատակք Հեթմոյ Բ. արքայի. Բովանդակութիւն.—
ա. ՝ Տոհմն Ռուբինեաց.— Առումն Հռոմկալայի յԵգիպտացւոց.— Ծոա-
ղատիկն: Բ. Վասն առման Երուսաղեմի և գալստեան Ռաչակրաց:
[Չափածո]: Ալիշան Ղ.—Հայապատում. պատմիչք և պատմութիւն
հայոց: Վենետիկ. 1901, էջ 519—520:

975. Ոտանաւոր բարեպաշտի թագավորին հայոց Հեթմոյ Բ.
«Որ ծառայեալս եմ...»: Արարատ. 1869, էջ 39—41:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

976. Ալիշան Ղ.—Հայապատում, պատմիչք և պատմութիւն հայոց, Վենետիկ, 1901, էջ 114—115:

977. Առումն Հոռակալայի Յեզիպացւոց, Հաշտութիւն ընդ Հեթմոյ Բ. (ժամանակակից հիշատակագիր), Ալիշան Ղ.—Հայապատում, պատմիչք և պատմութիւն հայոց, Վենետիկ, 1901, էջ 500—502:

978. Ալիշան Ղ.—Սիսուան, համադրութիւն Հայկական Կիլիկիո և Լևոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 303, 389, 516, 548, 556:

978բ. Զարպիսեանայան Գ.—Պատմութիւն հայերէն դպրութեան, Բ. Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 235—245:

979. Հեթում Բ. և Սմբատ Եղբայր նորա (հիշատակագիր), Ալիշան Ղ.—Հայապատում, պատմիչք և պատմութիւն հայոց, Վենետիկ, 1901, էջ 516—517:

980. Ներսէս Պալիեց.—Հեթում Բ. Նիդակակից Թաթարաց ընդդէմ եզիպտացւոյ.—Ալիշան Ղ.—Հայապատում, պատմիչք և պատմութիւն հայոց, Վենետիկ, 1901, էջ 521, 524:

ՎԱՅՐԱՄ ՐԱԲՈՒՆ

Ապրիլ է XIII դարի վերջերում: Բարուն են կոչել իր գիտութեան համար: Կիլիկյան Լևոն Բ. Թագաւորի խնդրով գրել է եկեղեցական գործեր (տոնական ճառեր) և «...Պատմութիւն Ռուբինյանց», որտեղ հետեւելով Ներսէս Շնորհալուն շարունակում է համանուն պատմութիւնը և հասցնում է մինչև Ռուբինյանները: Այդ քերթվածի մեջ վահրամ Բարունը պատմում է Լևոն Ա., Հեթում Ա., Լևոն Բ.-ի գործերը ութոտյան հյուսված բանաստեղծութեամբ:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

981. Վահրամայ Բարունւոյ ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859, 68 էջ: [Նույնը կա «Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց, որդւոյ Կոստանդեսոյ կոմսին Կոռիկոսոյ, Ի լոյս ընծայեաց ծանոթութ. Կարապետ վ. Շահնազարեանց, Փարիզ, 1859, 184 էջ. գրքի. 185—248 էջերում]:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

982. Ալիշան Ղ.—Հայաստանում, պատմիչք և պատմություն հայոց, Վենետիկ. 1901. էջ 280—281.

983. Զարպիսանալյան Գ.—Հայկական հին դպրության պատմություն (Դ—ԺԳ. դար), Երրորդ տպագ. Վենետիկ. 1897. էջ 791—793.

984. Չամչյան Մ.—Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տևառն 1784. ըստ աւանդելոյ այլևայլ մասնագրաց. ի վեց դիրս բովանդակեալ, և յերիս հատորս տըքոհեալ: Վենետիկ. 1784. հտ. Ա. էջ 17. հտ. Գ. էջ 283.

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

Կիրակոս Գանձակեցին (1201—1271) Վանական վարդապետի աշակերտն էր, նրա հետ էլ գերվել է թաթարների կողմից և հետագայում փախել է գերությունից: Կիրակոս Գանձակեցին իր պատմությունը սկսում է IV դարից, համառոտ կերպով պատմելով Գիրգոր Լուսավորչի և նրա հաջորդների գործերը, տեղ-տեղ նույնպես քաղաքական անցքերը:

Պատմության առաջին մասում նա հանդիսանում է որպես կոմպիլյատոր: Պատմության երկրորդ մասը 68 տարվա ժամանակաշրջան է ընդգրկում: Կիրակոս Գանձակեցին գրում է Լևոն Բ-ի, Զաքարե և Իվանե սպասալարների մասին, մոնղոլների ծագման, նրանց արշավանքների, կատարած ավերմունքների ու կոտորածների, նույնիսկ նրանց ապրուստի, կրոնի, լեզվի և արտաքին տեսքի մասին: Նա նկարագրում է Կիլիկիայի հայոց թագավորության և մոնղոլների հարաբերությունները, հայերի և վրացիների մղած պայքարը ընդդեմ մոնղոլների, գյուղացիական դժգոհություններն ու ելույթները մոնղոլների դեմ:

Կիրակոս Գանձակեցու պատմությունն արժեքավոր աղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների համար: Նա պատմում է, իբրև ականատես, իր ժամանակակից դեպքերը, տեղեկությունների մի մասն էլ լսել և հավաքել է ուրիշ ականատեսներից:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

985. Պատմութիւն Հայոց. արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ: Ի լոյս ընծայեաց Սսկան Տեր-Գրիգորեան Յովհաննիսեանց Երևանցի: Մոսկովա. 1858. 244 էջ:

986. Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ Համառոտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր լուսարանեալ: Վենետիկ. 1865. 265 էջ:

987. Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ: Առկասյան մատենադարան: Թիֆլիս. 1909. 420 էջ:

ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

988. Մի հատված Կիրակոսից.— Сибирский Вестник. 1833 г. стр. 93—108 и 109—124.

989. История монголов по армянским источникам. Вып. II. Извлечения из истории Киракоса. Перевод и объяснения К. Шаткапова. С. Петербург. 1874.

990. Краткий обзор писателя XIII века Киракоса Гандзакенци о монголах. Русское слово. 1860. № 6. стр. 108—124.

ՌՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

991. Ալիշան Ա.—Հայապատում, պատմիչք և պատմությունք հայոց: Վենետիկ. 1901. էջ 43:

992. Զամինյան Ա.—Հայ գրականության պատմություն: Նոր-Նախիջևան. 1914. էջ 203—204:

993. Զարպիանալյան Գարեգին.—Հայկական հին գաղության պատմություն: (Դ—ԺԳ. դար): Երրորդ տպագ. Վենետիկ. 1897 էջ 747—751:

994. Զամչյան Մ.—Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784. ըստ աւանդելոյ այլևայլ մատենադրաց. ի վեց գիրս բովանդակեալ, և յերիս հատորս տրոհեալ: Վենետիկ. 1784. Ա. հտ. էջ 16. Գ. հտ. էջ 210, 233, 236, 237, 271:

995. Սսկյան Հ.—Կիրակոս Գանձակեցի: Հանդ. Ամս. 1922. էջ 89—94, 214—226:

996. Ոսկյան Հ.—Հովհաննես Վանական և յուր զպրօքը՝
Վենետիկ. 1922. էջ. 92—113:

997. Փափագյում Վ.—Պատմություն հայոց գրականության,
(բանահյուսության պատմություն): Սկզբից մինչև մեր օրերը՝
Ջեռնարկ ուսուցիչների և դասադիրք զպրօքների համար: Հավել-
ված—նմուշներ հայ բանահյուսությունից:

Մասն I. Սկզբից մինչև XVII դարը. Երևան. 1907:

ՍՄԲԱՏ ԳՈՒՆՊԱՏԱԲԼ

Սմբատ Գունդատարլը (1208—1276 թ.թ.)—Հայաստանի կի-
լիկյան շրջանի պատմության մեջ իր՝ ռազմական, զիվանագի-
տական զործունեությամբ և պատմադրական-իրավաբանական
աշխատություններով նշանավոր դեր է խաղացել:

Նրա շարադրած պատմությունն ավելի շուտ տարեգրու-
թյուն է, որ սկսվում է 951 թվից և հասցնվում է մինչև 1331
թվականը: Տարեգրության վերջին մասը շարահարկ է ուրիշը՝
Իբրե ականատես, մասամբ և կատարող, Սմբատը հետաքրքիր
տեղեկություններ է տալիս: Նա պատմում է նաև թաթարական
Գիուգ խանի մոտ իր կատարած (1248—1250 թ.թ.) դեսպանու-
թյան մասին:

Բացի պատմությունից, Սմբատն ունի և Դատաստանագիրք,
որ գրել է 1264 թ. և կոչվում է «Յաղագս դատաստանաց թա-
գաւորաց» կամ «Օրենք և կանոնք ընդհանրական եկեղեցակա-
նաց և աշխարհականաց»:

ՏՊԱԿՐՎԵԼ ԵՆ

998. Սմբատայ Սպարապետի եղբոր Հեթմոյ առաջնոյ ար-
քայի Հայոց—պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպօլիս և Հայոց
մեծաց, ըստ կարգի ժամանակաց: [Հրատ. Ոսկան Գեորգյան
Հովհաննիսյան-Երևանցու]: Մոսկվա. 1856. 134 էջ:

999. Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց,
որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոստիկոսոյ, ի լոյս ընծայեաց հան-
դերձ ծանոթութեաժրք Կարապետ Վ. Շահնաղարեանց: (Շար հայ
պատմադրաց):

Փարիզ. 1859. 184 էջ [Գրքի 185—248 էջ—կա «Վահրամ
Տարունւոյ պատմութիւն Ռուբինեանց»]:

1000. Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստարլի) — (Կիլիկեան դատաստանագիրք XIII դարի): Ձեռագրերի համեմատությամբ լույս ընծայեց Արսեն վ. Ղլտճյան: Էջմիածին. 1918. 82 էջ:

1001. Из Летописи Конетабля Сембата, писателя XIII века. В книге: История монголов по армянским источникам. Выпуск I. Перевод и объяснения К. П. Патканова. С. Петербург. 1873, стр. 65—67.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1002. Ալիշան Ղ.—Հայապատում. պատմիչք և պատմություն հայոց: Վենետիկ. 1901. էջ 110—112:

1003. Զարպիսանալյան Գարեգին.—Հայկական հին դպրության պատմություն: (Դ—ԺԳ. դար): Երրորդ տպագ. Վենետիկ. 1897. էջ 769—775:

1004. Զամինյան Ա.—Հայ գրականության պատմություն: Նոր-Նախիջևան. 1914. էջ 199—204:

1005. Kaprst J.—Sempad'scher Kodex aus dem 13 Eahrhundert. Band. II. Strassburg. 1905.

1006. Սամուելյան Խ.—Հայ հին իրավունքի պատմություն: Հտ. I. Երևան. 1939 թ. էջ 90—95:

1007. Զամչյան Ս.—Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784. ըստ ավանդելոյ տյլեայլ մատենագրաց. ի վեց գիրս բովանդակեալ, և յերիս հատորս տրուհեալ: Վենետիկ. 1784. հտ. Ա. էջ 18, հտ. Գ. էջ. 335:

1008. Փափազյան Վ.—Պատմություն հայոց գրականության. (բանահյուսության պատմություն): Սկզբից մինչև մեր օրերը: Ձեռնարկ ուսուցիչների և դասագիրք դպրոցների համար: Հավելված—նմուշներ հայ բանահյուսությունից: Մասն I. Սկզբից մինչև XVII դարը: Երևան. 1907. էջ 241—242:

ՎԱՐԴԱՆ ՄԵԾ

Վարդան Մեծը (1238—1271) XIII դարի նշանավոր դեմքերից է: Մասնակցել է Սսի ժողովին (1243 թ.), շրջել է Հայաստանի գավառները, հեանորդներից կոչվել է Մեծ:

Երում է համառոտ ընդհանուր պատմություն՝ նկարագրութ-
յունը հասցնելով մինչև 1267 թվականը: Պատմությունն ավելի
հետաքրքրական է դառնում, երբ նա նկարագրում է իր ժամա-
նակի դեպքերը, հայ-վրացական ապստամբությունները մոն-
ղոլների դեմ, դեպի Արևելք կատարած իր ճանապարհորդություն-
ները—Հուլավու խանի մոտ, իր տեսակցությունն այդ խանի հետ:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ *

1009. Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ պատմութիւն
տիեզերական: Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին: Մոսկվա, 1861.
217 էջ:

1010. Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի
լուսարանեալ: Վենետիկ, 1862:

1011. **Всеобщая история Вардана Великого** Перев. М.
Эмин. Москва. 1861. XXIII+201+217 [Примеч., приложен.].

1012. **История монголов по армянским источникам**. Выпуск
I. Перевод и объяснения К. Патканова. С. Петербург. 1873. 1.
Из истории Вардана, стр. 1—29 [Մոնղոլներին վերաբերող
մասերը]:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1013. **Эмин Н. О.**—О Вардане Великом (1861). В книге:
Эмин Н. О. Исследования и статьи по армянской мифологии,
истории и истории литературы (за 1858—1884 г. г.). С прило-
жением переводов из армянских источников. Москва. 1896.
стр. 221—247.

1014. Զարպիանայան Վարեգին.—Հայկական հին դպրու-
թյան պատմություն: (Դ—ԺԳ. դար): Երրորդ տպագ. Վենետիկ.
1897. էջ 736—747:

1015. Զամինյան Ա.—Հայ գրականության պատմություն:
Նոր-Նախիջևան. 1914. էջ 201—203:

1016. Զամչյան Մ.—Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշ-
խարհի մինչև ջամ տեառն 1784. ըստ աւանդելոյ այլևայլ մա-

* Տպագրվել է նաև «Մեկնութիւն սաղմոսաց Դավթի: ...Հաշարխան.
1797. 518 էջ:

տենագրաց. ՚ի վեց դիրս բովանդակեալ, և յերիս հասորս տրոհեալ վենետիկ. հտ. Ա. 1784. էջ 16. հտ. Գ. 1786. էջ 187, 227, 232, 233, 237, 240, 261, 262, 271:

1017. Ոսկյան Հ.—Կիրակոս Գանձակեցի Հանդ. Ամս. 1922. էջ 89—94, 214—26:

1018. Փափագյան Վ.—Պատմություն հայոց գրականության (Բանահյուսության պատմություն): Սկզբից մինչև մեր օրերը: Ջեռարկ ուսուցիչների և դասադիրք դպրոցների համար: Հավելված—նմուշներ հայ բանահյուսությունից: Մասն I. Սկզբից մինչև XVII դարը Երևան. 1907. էջ 241:

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

Վարդան Այգեկցին ապրել է 12—13 դարերի միջև Հալերի շրջակա Մարաթ գյուղում: Ուսումը ստացել է Արքակալնի գյուղում: Երկար տարիներ ապրել է Սիրիայում: Նա լավատեղյակ է՝ արարական, եգիպտական, հունական կուլտուրաներին, շատ շրջել է. սովորել Այս առթիվ նա ստում է. «Որդեակք իմ, ի մանկութիւնէ մինչև ի ծերություն, շրջեցայ ի մեջ աշխարհին և տեսի զբաղումս զմեծամեծս: Եվ անշափ լուայ ծածկաբար զգործոցն զչարս, նաև ուսա աստուածեղէն պրոց, որ ոչ ոյ թիւ»: Վարդան Այգեկցին Կիլիկիայի Հռոմկալա քաղաքում քարոզներ է կարդացել: Իր ճարտար քարոզներում, իր առաւիններում, նա հարձակել է նաև «վաշխով փող տվողներին»՝ «մշակի վարձը կարողներին» վրա, խարաղանել է՝ վաճառականներին, հարուստներին, որի պատճառով հարվածվել է: Վարդան Այգեկցին ստիպված է եղել բնակություն հաստատել Սեւով լեռների Այգեակ անունով մի մենաստանում, որտեղ ապրել է մինչև խոր ծերություն, այդտեղից էլ կոչվել է Այգեկցի: Վարդան Այգեկցին գրել է ճառեր, խրատներ, բաղձաթիվ առաւիններ: Ակադեմիկոս Ն. Մառի կարծիքով նա կազմել է առաւինների մի քանի ժողովածուներ, դուցե և նրանից հետո, ուրիշները ճառերից և ժողովրդական նյութերից հանել են առաւինները, ժողովածուներ են կազմել և այսպիսով առաջացել են Վարդանայ առաւինները: Այդ ժողովածուները մինչև 17-րդ դարի կեսերը շարունակ ընդարձակվել են, տարբեր աղբյուրներից հարստացվել: Առաւինները անհրաժեշտ էին համար-

վում թե քարոզների ժամանակ և թե դպրոցներում ավանդվող «առասպելարանության» դասերին, երբ աշակերտներին անգիր էին անել տալիս, մեկնում ու վերամշակում առակները:

Այդ առակների հետ միասին, միջին դարերում, Հայաստանում տարածված էին նաև առասպելները, պատմվածքները և ժողովրդական դրույցները:

Հայագետ Ն. Մառը բաղմամբիվ ձևադրերից հավաքել է միջնադարում տարածված առակները, առասպելները ու պատմվածքները, մանրադննին քննել, համեմատել, պարզել նրանց խմբերն ու խմբագրությունները, բաղդատել մեր մյուս դրականության հետ, աշխատել է որոշել առակների հեղինակներին և իր եռանդուն աշխատանքների արդյունքը հրատարակել «Ժողովածոյք Առակաց Վարդանայ» իր եռահատոր գործի մեջ:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1019. Աղուեսագիրք. Ամստերդամ 1668 թ.:

1020. Աղուեսագիրք. Մարսել. 1676 թ.:

1021. Աղուեսագիրք. Էջմիածին. 1698 թ.:

1022. Գիրք Աշխարհաց և առասպելութեանց Որէ Աղուէսագիրք: Մարսելեայ. 1683. [1—82 էջ. «Աշխարհացոյց Մօսէսի Խորենացւոյ»: 83 էջից—«Գիրք Առասպելարանութեանց Որ ասի Աղուէսագիրք. Արարեալ սակս խրատու և զգուշութեան»

Իսկանդարիւրյուն. 1. Ազոաւու զսլանիրն ի բերանն ունիլ:— 2. Ազոաւու զձագս խրատելն:— 3. Աղեքսանդրու յամ. ոտէք իւրովի գնալն գեսպան:— 4. Աղեքսանդրու պատահելն եղեր աշխարհի:— 5. Աղեքսանդրու զնուռնն կտրելն:— 6. Աղեքսանդրու զօրու իւրով ձեան պատահելն:— 7. Աղուեսու զսառն գտնուելն:— 8. Աղուեսու և խեցգետնի եղրայր լինելն:— 9. Աղուեսու զուղտն մերձ ի մահ գտանելն:— 10. Աղուեսու զթուղթ գտանելն, և առ դայլն տանելն:— 11. Աղուեսու զգայլ խարելն:— 12. Աղուեսու զսլանիր յորոգայթ գտնուելն:— 13. Աղուեսու քաղցնուլն, և ի մէջ հորոյն գրար գտնուելն:— 14. Աղուեսու գետատար լինելն:— 15. Աղուեսու զսլաղ գտնուելն:— 16. Աղուեսու զկաքաւ ըմբռնելն:— 17. Աղուեսու զչիտ ըմբռնելն:— 18. Աղուեսու արծուոյ եղրայրանալն:— 19. Աղբատի գնալն ի գիւղ մի:— 20. Աղբատ իրիցու մօտ մսադործ գնալն:— 21. Այծոյ ի գարձ պատ նստիլն:— 22. Այրի կնոջ զգող տղայ ունիլն:— 23. Այրւոյ զտառն այծ ունիլ:— 24. Աքանց երկուց ընկերանալն:— 25. Առիւծու ի քարայր մտնուլն:—

26. Առիւծու հիւանդանալն և բժշկաց խնդիր տունելն:—27. Առիւծու զաղուես զաղասաւոր կալնուլն:—28. Առիւծու տեսանելն զփախուստ կենդանեացն:—29. Առիւծու հիւանդանալն, և էրէոց տեսալն:—30. Առիւծու, գայլին, և աղուեսին եղբայրանալն:—31. Առնն ելանելն ի դժուար դարն ի վեր:—Առնն աղքատանալն ի դալաթիայ՝ և զարտ վաճառելն:—32. Առնն գերեզմանակարի, և խաթունին:—33. Առնն բազրկանի զրեոինսն տանելն:—34. Առնն մեոյ յերուսաղէմ գնալն:—35. Առնն միոյ առ թագաւորն մտանելն:—36. Առնն մեծատուն գնալն խնամախոս:—37. Առնն գնացողի առ դատաւորն:—38. Առնն մարդասպանի փախուստն:—39. Առնն յիմարի, և ունողի զմի դիկան:—40. Առնն հողագործի զականաթլարելն:—41. Առնն զլեզու հորթուն հատանելն:—42. Առնն աղքատի զմիս խորովելն:—43. Առնն բարւոյ շարութեանց զատելն:—44. Առնն ցանողի զձմերուկ:—45. Առնն որ դիւր ժամանակն ի մեղս էր:—46. Առնն զգայլ ըմբռնելն և զոտներ կապելն:—47. Առնն զէշ կորուսանելն:—48. Առնն հարիւր մոր հաց վաստակելն:—49. Առնն ի հողվարսն զերիս գանգս գտանելն:—50. Առնն զհագար խոզս ի մի վայր ածելն:—51. Առնն պարտականի և անհարկի:—52. Առնն զհագար կաղապար ոսկի թաղելն:—53. Ասորւոյ երիցու կռուիլն:—54. Արազլի բռնութեամբ յամուսնութիւն:—55. Արծուոյ վերանալն ի տապ:—56. Արծուոյ նետահար լինելն:—57. Արծուոյ և կաքաւի շարակամ:—58. Առնն ունողի զկին բարկացող:—58. Առնն ունողի զկին անզգամ:

1023. Աղուեսագիրք. Վարդան Այգեկցի առակագիր ԺԳ դարի: Երևան. Պետհրատ. 1935. 116 էջ:

Բովանդակութիւն.—Պարու հաշիվ:—Այրի կին և որդի:—Միայնակյայ և դամբո շուն:—Այծեր և գայլեր:—Երկու նկարիչ:—Առյուծ և աղվես:—Իմաստուն դատաւորը:—Առյուծ և գայլ և աղվես:—Գինի:—Իմաստուն ավագեշ:—Միամիտ գողեր:—Եղեգն և ծառեր:—Իշխան և այրի կին:—Իմաստուն գինձոր:—Թագաւոր և օձ:—Առյուծ և աղվես և արջ:—Կար մեղու պատճառ պատերազմի:—Կտակ վստն դանձի:—Ուղտ և գայլ և աղվես:—Կռունկ՝ թագաւոր թռչունների և էշ:—Եղն և ձի:—Հիմար և ձմերուկ:—Էշին թոռ ծնվեց:—Աղքատ և ավետարան:—Հայր որդի:—Մարդ և ընկույզ և ձմերուկ:—Եկեղեցի և ջրաղաց:—Ամենատղետ մարդ:—Աղվես և որսորդ:—Իշխանաւոր և իմաստուն:—Աղվես և թղթատար գայլ:—Այրի կին և խորթ որդի:—Հալալ մարդ:—Մուկն և ուղտ:—Արվեստ կնոջ:—Գայլ և աղվես և ջորի:—Գող քահանա և այրի կին:—Անզգամ կին:—Դրախտ և զեղջուկ մարդ:

1024. **Март Н.**—Сборник притч Вардана, материалы для истории средневековой Армянской литературы. I Исследование С. Петербург. ХІІ+594 стр. II Текст. 1894. ХVІ+ 344 стр. III Приложения 1894.

1025. Մառ Ն.—Ժողովածոյք Առակաց Վարդանայ, Նիւթք առ ի Պատմութիւն միջին դարուց դպրութեան հայերենի 3 հատոր. Ս. Պետերբուրգ. 1894. ԺԶ. 344 էջ.

1026. Հատընտիր առակք Վարդանայ վարդապետի [Հայերեն և ֆրանսերեն. 45 առակ.]: Պարիզ. 1825. 96 էջ.

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1027. Արեղյան Ս.—Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ. Երևան. 1935.

1028. Հայ գրականության պատմություն: Պատրաստել է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Գրականության և Լեզվի Ինստիտուտի բրիգադը: Թույլատրված է ՀՍՍՌ Լուսժողկոմատի կողմից, որպես դասագիրք միջնակարգ դպրոցների VІІІ դասարանների համար:

Ընդհանուր խմբագրությամբ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի խմբ. հանձնաժողովի: Երևան. Հայպետհրատ. 1940. էջ 127—133:

Գիրք I. Մկրյան Մկրտիչ (ֆիլոլոգիական գիտ. թեկն.)—Ա. «Հին շրջան» և «Միջին շրջան»: Զարյան Ռուբեն (ֆիլոլոգիական գիտ. թեկն.).—Բ. «Նոր շրջան»-ի հայ գրականությունը ХІХ դարի առաջին հիսնամյակում» բաժինը]: Խմբ. պրոֆ. Հով. Մելիքյանի և Խորեն Սարգսյանի:

1029. Մառ Ն.—Ժողովածոյք Առակաց Վարդանայ [Տես վերը հիշված բնագիրը և թարգմ.]:

1030. Տաշյան Հ.—Ժողովոժույք առակաց Վարդանաց: Նյութեր պատմության հայոց միջնադարյան մատենագրության: Ըստ հայագետ Ն. Մառի: Տեղեկություն և քաղվածքներ: Վիեննա. 1900. 195 էջ.

1031. Տեր-Մկրտչյան Դալուստ.—Հայկականք: [Արտատպ. Արարատից. Ն. Մառի ժողովածվի և Աղվեսապրքի մասին]: Վարչապատ. 1899. 102 էջ.

1032. Փափազյան Վ.—Պատմություն հայոց գրականության (բանահյուսության պատմություն): Սկզբից մինչև մեր օրերը:

Ջեռնարկ ուսուցիչների և դասագիրք դպրոցների համար: Հավել-
ված — նմուշներ հայ բանահյուսությունից:

Մասն I. Սկզբից մինչև XVII դարը: Երևան, 1907, էջ
224—240:

1033. Քարամյան Ն.—Ն. Մառ. ժողովածույք առակաց Վար-
դանա: Նիւթք առ ի պատմություն միջին դարուց դպրության
հայերենի: Լուսա. 1899. Գիրք. Բ. էջ 303—316. [Գրախոսական]:

Ֆ Ր Ի Կ

Ֆրիկն ապրել է 13-րդ դարում: Ենթադրվում է, որ «Ֆրիկ»
բանաստեղծի գրական անունն է, իսկական անունը անհայտ է:
Նրա ոտանավորների մեջ եղած հատուկաոր տեղեկություններից
պարզվում է, որ Ֆրիկը ոմն, Թագվոշի որդի, եղել է աշխարհա-
կան և մեր մյուս միջնադարյան բանաստեղծների պես, որն է
կապ չի ունեցել վանքերի և կղերի հետ:

Ֆրիկը եղել է «ճարտար աշխարհական»: Տաղերից երևում
է, որ նա իր ժամանակի կրթված, զարգացած մարդկանցից է
եղել: Նրա կյանքը դառնությամբ ու վշտերով է ընթացել: Մոն-
ղոլների շահատակման ժամանակ նա ոչ միայն իր ամբողջ
ունեցվածքն է կորցրել, այլև ստիպված է եղել իր միակ որդուն
գրավ դնել մոնղոլ հարկահանների մոտ:

Կորցրած տուն ու տեղը, հարազատին, Ֆրիկը երկար տա-
րիներ պանդխտության մեջ է ապրել Կիլիկիայի Հարզա (Հաջըն)
քաղաքում:

Ֆրիկն ստեղծագործել է մոնղոլների տիրապետության ժա-
մանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը տնտեսական քայքայման
և աղքատության ծանր վիճակ էր ապրում, երբ մոնղոլ բռնա-
կալների ու փեոզուլական կարգերի լուծը, կողոպուտն ու բռնու-
թյունն էր իշխում:

Ֆրիկի երգերի հիմնական ուղղությունը նրա դեմոկրատա-
կան բանաստեղծություններն են՝ («Գանգատ», «Ընդդեմ ֆա-
լաքին»), նա երգել է հասարակական կյանքի անալատարու-

թյունը, ընչազուրկ ժողովրդի տառապանքները, ցատումով պատմել է մոնղոլների շահագործման, հարկահանության, թալանի մասին: Նա հեղինակ է աստծու «արդար և իրաւ» դատաստանը, «Օռու» է հայտարարում ֆալաքի ճակատագրի արածները:

Իր բարձրարժեք դեմոկրատական բանաստեղծությունների կողքին փրիկն ունի նաև բարոյախոսական-խրատական տաղեր («Յիշէ գրանն աւետարանին» «է՞ր չես երթար ի միւր ի վայր...»), որոնք խեղճ նյութ գրածների մեջ հիմնականը չեն, բայց այնուամենայնիվ, ունեն որոշ հակադրող շեշտ դեպի ժամանակի կղերական գաղափարները:

Փրիկի ստեղծագործության մյուս առավելությունն այն է, որ նա օգտագործել է մեր ժողովրդական բանահյուսության գոհարները՝ առածներն ու ասացվածքները:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1034. Փրիկ (ժողովածու): ՀՍՍՄ. Պատմության և գրականութ. ինստ-տ: Երևան. 1937. 278 էջ:

Բովանդակութիւն: Դանգատ. «Աստուած արդար և ողորմած յամենայնի»:—Բարադի ումեմն մարդոյ կռիւ յեղեալ ընդ Աստուծոյ, կու մեղադրէ և յետոյ ...«Աստուած արդար և յիրաւի...»:—Ընդդէմ Ֆալաքին. «է՛յ ֆալաք, երբ ծոխ մարդուն զօրն ի բուն փորեա նորա հոր»:—Վասն Թալէհի և Պռճի. «Մարդոյն որ թալէհն ու պուրճն ի ֆալաքն չէ ըղորդած»:—Վասն Արդուն, Ղանին և Բուղային. «Փառք Աստուծոյ միշտ կենդանոյն...»:—Կուղես որ ազիպ կենաս որ ամեն մարդ քեզ սիրէ...»:—Ոտանաւոր ասացեալ Ֆրկանն. «Թէ չի կայր սէր աշխարհս, կամ սէր չէր յեղյալ...»:—Տաղ Փրիկէ ասացեալ ի վերայ մեծատանն և աղքատ Ղազարին. «էր չես յերթայր ի միւր ի վայր, ա՛յ վերաւոր մարդ ու տըխմար...»:—Փրիկ ճարտար աշխարհական է. «էյ անօրէն և ամբարիշտ...»:—Տաղ Ֆրկան ասացեալ. «Սիրտ իմ, ընդէ՞ր ես խոռվեր...»:—Նորին Ֆրկան ասացեալ. «Ով կու սիրէ կուժ ու կըթխայ...»:—Փրիկի տաղն «Յորժամ որ մահըն մօտենայ մարդոյն, որ պա...»:—* «Այս է համառօտիւն ծաղիկն, որ թափէ ըզմարդն ի մահու...»:—* «...Բան ըզքեզ ծանօթ չունիմ, այս դըրանէս ռըր հեռանամ...»:—* «Զիմաստուն մարդ ով կարէ պատմել լեղւով...»:—Նորին Ֆրկանն ասացեալ ողբ խորոյ սրտից. «Աններելի հուր վառեցի հոգ յաշխարհս ի շուռ կու դամ...»:—Նորին Ֆրկանն

ասացեալ ողբամբ զղջման ի հոգի. «Ջանացի թէ լոյսն ելնեմ ի խաւարն խիստ մօտեցայ...»:—

«Ջբանի գոր յարեան այլազգիքի վերայ քրիստոնէից և աւարարին զտեղ սրբութեանց վասն անմիաբանութեան քրիստոնէից»:
Կոչնակ ի Բ 1922. էջ 1262—1264, 1294—1296:

—Ֆրկի ասացեալ վասն ողորմութեան. «Յիշէ զրանն Աւետարանին, իմաստուն կուսանքն ի նշման»:
Հայ էջեր. Փարիզ. 1912 թ. էջ 35—37:

—Տղա Ֆրիկէ ասացյալ ի վերայ մեծատանն և աղքատ Հաղարին. «Է՛ր շեռ երթար ի միտ վայր, էյ, զերեվար մարդ ու տխմար»:
Հայ էջեր. Փարիզ. 1912. էջ 38:

ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1035. Брюсов В. (редакт.).—Поэзия Армении с древнейших времен до наших дней, в переводе русских поэтов. Москва. 1916. [Перевод, отрывок из произведения Фрика „Жалобы“].

1036. Брюсов В.—Армянск. вестник. Москва. 1916, № 1. стр. 10—11.

1037. Антология армянской поэзии с древнейших времен до наших дней. Под редакцией С. С. Арутюняна и В. Я. Кирпотина. Гос. изд. „Художественная литература“. Москва, 1940. стр. 240—244. [Фрик.—1. Жалобы. Пер. первых 18 четверостиший В. Брюсова, остальных О. Румера.—2. Колесо судьбы. Пер. В. Брюсова].

ՌՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1038. Կոստանյան Կ.—Նոր ժողովածու միջնադարյան հայոց տաղերի և ոտանավորների. Գ. պրակ. Թիֆլիս. 1896:

1039. Հայ գրականութեան պատմություն. Պատրաստել է ՍՍՌԻ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Գրականության և Լեզվի Ինստիտուտի բրիգադը. Թույլատրված է ՀՍՍՌ Լուսժողկոմատի կողմից, որպես դասագիրք միջնակարգ դպրոցների VIII դասարանի համար: Ընդհանուր խմբագրությամբ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի խմբագ-

բաղան հանձնաժողովի: Երևան, Հայպետհրատ. 1940. էջ 111—119:

Գիրք 1. [Մկրյան Մկրտիչ (Ֆիլոլոգիական դիտ. թեկն.)—Ա. «Հին շրջան» և «Միջին շրջան»: Ջարյան Ռուբեն (Ֆիլոլոգիական դիտ. թեկն.)—Բ. «Նոր շրջան»-ի «Հայ գրականությունը XIX դարի առաջին հիսնամյակում» բաժինը]: Խմբ. Հով. Մելիքյանի և Խորեն Սարգսյանի:

1040. Հայ էջեր: [Ժողովածու]: Փարիզ. 1812:

1041. Մկրյան Մ.—(Կաղմեց). XIII—XVIII դարերի հայ աշխարհի գրականությունը. ընտիր նմուշներ: Երևան. 1938:

1042. Տիրայր Եպ.—Մոռացված մի հայ երգիչ: Արարատ. 1918. էջ 61—88, էջ 171—203:

1043. Տեկանց Ա. Վ.—Հայերգ. մեղեդիք, տաղք և երգք: Թիֆլիս. 1882:

1044. Ֆրիկ. (Ժողովածու). ՀՍԽՀ. Պատմության և Գրականութ. ինստիտուտ: Երևան. 1937. էջ 208:

1045. [Այլ նյութեր]. ա) Տաղարան: Վենետիկ. 1513 [կա 2 տաղ], բ) Ալիշան Ղ.—Հուշիկք հայրենեաց: Վենետիկ. 1870. Բ. հտ. բ) Սիոն. 1876. № 1, էջ 13—14. գ), Երկրագունդ. 1885. էջ 173—175:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ

Կոստանդին Երզնկացին XIII—XIV դարերի խոշորագույն տաղասացներից է: Նա ծնվել է ժամանակի առևտրական և կուլտուրական կենտրոն հանդիսացող Երզնկա քաղաղում (1250—60 թ.թ.): Ինչպես Ֆրիկը առաջինն էր, որ սոցիալական անարդարության դեմ բողոքի ուժեղ ձայն հնչեցրեց, նույնպես և Կոստանդին Երզնկացին երգել է շահագործվող աշխատավորներին վիշտը:

Աշխարհիկ տաղեր գրելու համար, կղերը հալածել է Կոստանդին Երզնկացուն, իսկ աշխատավորները, ինչպես ինքն է ասում,

«քաղցրահամ» և «սիրտ բաներ» են պահանջել նրանից: Իր տա-
ղերում Կոստանդին Երզնկացին գրել է՝ մարդասիրություն, ըն-
կերասիրություն. դատապարտել է՝ տգիտությունը, իր ժամա-
նակի աշխարհիկ և հոգևոր ղեկավարներին («ոչ նալ ունենք, ոչ
նավավար», «չատ գայլեր են հարձակուել ի վերա մեր...»):

Կոստանդին Երզնկացին երգել է բնության զարթոնքը,
վարդ ու ըլրուլի սիրտ մասին, զարնան զալը:

Լինելով հիմնականում ընապաշտ և սիրտ երգիչ, Կոստանդին
Երզնկացին բալորովին զեռ ազատ չէ միջնադարի մտայնությու-
նից. նա գրել է նաև «հանդերձեալ կյանքի», «աշխարհի ունայնու-
թյան քրիստոնեական բարիքի» մասին: Այնուամենայնիվ մեծ
բանաստեղծի ամբողջ ստեղծագործությունը բուրում է ժողովրդ-
դական բանահյուսությամբ, նրա լեզուն, նկարագրությունները
սլարդ են, ժողովրդական:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1046. Կոստանդին Երզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բա-
նաստեղծը և յուր քերթվածները: Ուսումնասիրությամբ հրա-
տարակեց Մ. Պոտուրյան: ՎԼՆԵՄԻԿ. 1905. 298 էջ:

1. Բովանդակում ե. Օրհնեալ է հայրն անսկիզբն.—2.—Ահա
սկիզբն առնում բանից:—3. «Գարուն լինի ուրախութիւն...»—
4. «Մի հալատալ ամէն մարդոյ...»—5. «Զարթիկ ի յերազուտ...»—
6. «Ահա գիշերս էանց...»—7. «Ֆրիաթ կանչեմ հաղար...»—
8. «Ոմանք չար են հետ ինձ...»—9. «Այլոց այնչափ բարձիր...»—
10. «Հոգւով տըւեր խըրատ...»—11. «Այսօր եղև պայծառ գա-
րուն...»—12. «Ականջ դիր ու լըսէ...»—13. «Անմահ արքայ և
Տէր երկնի...»—14. «Յանուն անեղին Աստուծոյ և մեծին...»—
15. «Մեծ գոյութիւն, հարիւր հազար...»—16. «Այսօր եղայ
հոգմըն գարնան...»—17. «Մի պարծենալ դու ի քէնէ...»—
18. «Առաքեալըն Քրիստոսի մեծըն...»—19. «Ես քանի հառաչ
բերեմ...»—20. «Կամեցայ բանք մի քանի...»—20. «Պարոր Ամիր
մեր պարծանաց...»—22. «Զիմ գանկատըս լըսեցեք...»—23. «Յետ
քննութեանց դատաստանին...»—24. «Հանց գեղեցիկ մորճ ու
շիտակ...»—25. «Ահա հոտն գար գարնան...»—26. «Այ սուրաթ
պայծառ...»—27. «Այսօր եղև պայծառ գարուն...»—28. Բանք
յաղագս չար ընկերաց...»—29. «Բանք յաղագս անցաւոր մեծու-
թեան—Յանուն անեղին...»—30. «Ի լոյս արեղական—Ահա ի դ-

շերս է անց. .»—31. «Յաղագս անգիտաց...»—32. «Գարուն մեծ գոհութիւն, հարիւր հաղար...» | Վերջին 4 բանաստեղծությունները տես Անահիտ. 1905. № 5, էջ 99—103:—33. Հատընտիր քառուակներ. | 18 հատ. Կ. Կոստանյանի Արխիվ. Պետ. գրադ. թանգ. № 223 | 1046տ. Մկրյան Մ.—XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն: Ընտիր նմուշներ: Երևան. 1938. Կ. Երզնկացու բանաստեղծութ. էջ 27—54:

ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

1047. Антология армянской поэзии с древнейших времен до наших дней. Под редакцией С. С. Арутюняна и В. Я. Кирпотина. Гос. изд. „Художественная литература“. Москва. 1940. стр. 245—250. [Костантин Ерзынкади.—1. Весна. Пер. В. Брюсова:—2. Видение. Пер. М. Лозинского.—3. Борьба плоти и духа. Пер. М. Лозинского.—4. Слово на час печали, написано о братьях, обидевших меня. Пер. М. Лозинского.]

ՌՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1048. Մկրտչյան Աշ.—Կոստանդին Երզնկացու ստեղծագործություն: Խորհրդ. մանկավարժ. 1940. № 3, էջ 97—101:

1048. ա. Հոգիվածներ ամսագրերում.—ա) «Լոյս» 1906. էջ 280. բ) «Հանդես Ամս.» 1905. էջ 384. գ) «Բազմավեպ». 1905. էջ 567:

1049. Պատուրյան Մ.—Կոստանդին Երզնկացի. ժԴ դարու ժողովրդական բանաստեղծ և յուր քերթվածները: Ուսումնասիրություն և բանաստեղծությունների հրատ.: Վենետիկ. 1905. 208 էջ:

1050. Հայ գրականության պատմություն: Պատրաստել է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Գրականության և Լեզվի Ինստիտուտի բրիգադը: Խույլատրված է ՀՍՍՌ Լուսժողկոմատի կողմից որպես դասագիրք միջնակարգ դպրոցների VIII դասարանի համար: Ընդհանուր խմբագրությամբ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի խմբագրական հանձնաժողովի:

Երևան. Հայպետհրատ. 1940. էջ 119—126:

Գիրք 1. [Մկրյան Մկրտիչ—ֆիլոլոգիական գիտ. թեկն.]—Ա. «Հին շրջան» և «Միջին շրջան»-ի «Հայ գրականությունը XIX դարի առաջին հիսնամյակում» բաժինը: Խմբ. պրոֆ. Հով. Մելիքյանի և Խորեն Սարգսյանի:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՆԿԱՅԻ

(Պլուզ, Ծործորեցի)

Հստ Ղ. Ալիշանի, ապրել է շուրջ 1250 — 1326 թ. թ.: Պլուզ (կապուտաշք) մականունն է. Ծործորեցի է կոչվել Արտազ գավառի Ծործոր գյուղի վանքում սովորելու համար: Մեր պատմիչները գովեստով են խոսում Հովհաննես Երզնկացու մասին, անվանելով՝ «Բաբունի», «Հոգնիմաստ հոետոր», «Անյաղթ վարդապետ», «Ընտրեալ» ևլն:

Գրել է բազմաթիվ եկեղեցական գործեր, նաև տաղեր, մեկնություն քերականի և «Յաղագս երկնային շարժմանց»:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1051. Վիպասանութիւն գերկնային մարմնոց շարժմանէ, զլուսաւորացն՝ որ ի նմա, և զհաստատութենէ երկրի:

[Բ. էջ]. Տեսրակ Համառոտ և լի իմաստախոհ բանիւք: Արարեալ Հոգելից և Իմաստուն Վարդապետին Յօհաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Ծործորեցի. սակա սքանչելարուեստ արարչագործութեանցն Ած. և յաղագս թուոյ երկնից, շարժման լուսաւորաց, կարգի տարերաց, եղանակաց տարւոյ, և այլոց իրաց բնականաց. ի ինչորոյ զուարթամիտ պատանւոյն Վաղթանկայ կրտսեր որդւոյ՝ Հոջակաւոր Իշխանին Հայոց՝ Ոմէկայ:

Նոր-Նախիջևան. 1792. 73 էջ.

1052. «Ես տկար Հովհաննէս հոգւով տառապեալս»: Հանդ. Ս.Մ.Ս. 1895. էջ 310:

1053. Խրատ Պիտանիք.—«Յամենայն մեղաց ի դատ»: Բաղմավեպ. 1905. № 10, 1906. № 8:

1054. «Այս ինչ կրակ էր»: Կոստանյան Կ.—Նոր ժողովածու: Ի. Պրակ. Թիֆլիս. 1903. Բաղմավեպ. 1906. № 8:

1055. Քառյակներ. —Նահապետ Քուչակի դիվանը: Փարիզ. 1902:

1056. Մկրյան Մ. (կաղմեց).—XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն: Ընտիր նմուշներ: Երևան. 1938. էջ 57—60:

ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

1057. Антология армянской поэзии с древнейших времен до наших дней. Под редакцией С. С. Арутюняна и С. Я. Кяр-

потина. Гос. изд. „Художественная литература“. Москва. 1940. стр. 251—255.

[Ованес Ерзинкаци.—1. Четверостишия. Пер. В. Брюсова и О. Румера:—2. Сын священника и доч мулы. Пер. Е. Полонской].

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1058. Ալիշան Ղ.—Հայապատում. պատմիչք և պատմություն հայոց: Վենետիկ. 1901. էջ 119—120:

1059. Ալիշան Ղ.—Հուշիկք հայրենեաց հայոց: Հտ. Բ. 1870. էջ 456—493:

1060. Զարպիանայան Գ.—Պատմություն հայ դպրության: Հտ. Բ. Նոր մատենագրություն: Վենետիկ. 1876. էջ 266:

1061. Զամչյան Մ.—Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784. ըստ աւանդելոյ այլևայլ մատենագրաց. ի վեց գիրս բովանդակեալ, յերիս հատորս տրոհեալ: Վենետիկ. 1786. հտ. Գ. էջ 271, 274, 305, 308, 314:

1062. Օրմանյան Մ. եպ.—Ազգապատում: Հայ ուղղափ. եկեղեցւո անցքերը սկզբեն մինչև մեր օրերը հարակից պարագաներով պատմւած: Հտ. Բ. Կ. Պոլիս. 1912. էջ 1736—1783:

ԵՄԱՅԻ ՆՇԵՑԻ

Եսայի Նշեցին ապրել է XIII դարի առաջին կեսերին (մեռել է 1338 թ.). Ստեփանոս Օրբելյանի ժամանակակից է: Հիսունհինգ տարի շարունակ եղել է Գայլեձորի հայտնի դպրոցի ուսուցիչ. ժամանակի մեծ գիտնականներից է: Այդ դպրոցում աստվածաբանության հետ միասին ուսումնասիրում էին քերականություն և փիլիսոփայություն, հավաքում էին ձեռագրերը, ծաղկադարդում: Եսայի Նշեցին գրել է՝ «Մեկնութիւնք քերականի», կրօնական թղթեր և «Վիճաբանութիւնք»:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1063. Ալիշան Ղ.—Հայապատում. պատմիչք և պատմություն հայոց: Վենետիկ. 1901. էջ 120—121:

1064. Костанян К.—Из истории древней армянской литературы XIII—XIV в. в. Восточный сборник в честь А. Н. Веселовского. Москва. 1914. стр. 415—416.

1065. Չամչյան Մ.—Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784. ըստ աւանդելոյ այլևայլ մատենագրաց. ի վեց գիրս բովանդակեալ, և յերիս հատորս տրուհեալ: Վենետիկ. 1786. հտ. Գ. էջ 275, 291, 305, 326, 327:

1066. Օրմանյան Մ. եպ.—Ազգապատում: Հայ ուղղափ. եկեղեցւոյ անցքերը սկզբին մինչև մեր օրերը հարակից ազգային պարագաներով պատմված: Հտ. Բ. Կ. Պոլիս. 1912. էջ 1800—1801:

ԳՐԻԳՈՐ ԱՆՍՎԱՐՋԵՑԻ

Ապրել է 14-րդ դարի սկզբում: Եղել է Սսի կաթողիկոս, ժամանակի կրթված մարդկանցից մեկը: Գրել է շարականներ (32 հատ), որոնց ցուցակը Ղ. Ալիշանը հրատարակել է իր «Սիսուան» աշխատության մեջ՝ բերելով որոշ նմուշներ: Գրել է նաև կրոնական բովանդակությամբ ներբողներ և թղթեր:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1067. Ալիշան Ղ.—Սիսուան. համագրություն հայկական Կիլիկիո և Լևոն Մեծագործ: Վենետիկ. 1870. էջ 242:

1068. Ալիշան Ղ.—Հայաստանում. պատմիչք և պատմություն հայոց: Վենետիկ. 1901. էջ 119:

1069. Զարայեանալյան Գ.—Հայկական հին դպրության պատմություն Երրորդ. տպագ. Վենետիկ. 1897. էջ 778—779:

1070. Զամինյան Ա.—Հայոց եկեղեցու պատմությունը: Նոր-Նախիջևան. 1908. էջ 252—256:

1071. Տաշյան Հ.—Ցուցակ հայերեն ձևագրաց, մատենագրանին: Մխիթարեանց ի Վիեննա Վիեննա. 1895. էջ 1073:

1072. Չամչյան Մ.—Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784. ըստ աւանդելոյ այլևայլ մատենագրաց. ի վեց գիրս բովանդակեալ, և յերիս հատորս տրուհեալ: Վենետիկ. 1784. հտ. Բ. էջ 283, 284, 289, 290, 293, 296, 301, 304, 309:

1073. Օրմանյան Մ. եպ.—Ազգապատում: Հայ ուղղափ. եկեղեցւոյ անցքերը սկզբից մինչև մեր օրերը. հարակից ազգային պարագաներով պատմված: Հտ. Բ. Կ. Պոլիս. 1912. էջ 1736—1783:

ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՈՆԱՅԻ ԿԱՄ ԿԵՉԱՌԵՅԻ

Ապրիլ և գործել է XIII դարի վերջերին, XIV սկզբին: Արա-
քայան Կեչառուք գյուղից է: Մեր պատմիչներից Կիրակոս
Գանձակեցին նրա մասին գրում է. «...սուրբ, առաքինի և զի-
տութեամբ հոչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստում»:

Բացի քաղմաթիվ երգերից, որ կրօնական բնույթի են*,
Խաչատուր Կեչառեցին գրել է ողբ Հայաստանի մասին (Ալիշան
Ղ. Մխական. տեղագրութիւն Սյունյաց աշխարհի. Վենետիկ.
1893. էջ 94, 134) և մի քանի տաղեր: Նրա խոշոր գործն այն
է, որ վերականգնել և խմբագրել է Աղեքսանդր Մակեդոնացու
պատմության հայերեն հին տեքստը (ինքն ասում է, որ աշխա-
տել է «ի յօրինումն գրոցս», «սրբագրեալ ի գրոց հնոց»):

Հին և միջնադարյան գրականության զարդերից մեկն է
Աղեքսանդր Մակեդոնացուն նվիրված այդ վեպը: Մեր պատմա-
հայր Մովսես Խորենացին իր պատմության մեջ հիշատակու-
թյուններ ունի այդ դրքի մասին. ըստ մի քանի բանասերների
Մ. Խորենացին է թարգմանել «Մեծ աշխարհակալ Աղեքսանդր
Մակեդոնացու պատմութիւնը»: Խաչատուր Կեչառեցին այդ հնա-
դարյան վեպը վերականգնել, խմբագրել է:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1074. «Թե մարդ ես և միտ ունեաս: Նոր ժողովածու. միջ-
նադարյան հայոց տաղեր և ոսանավորներ. հրատ. Կ. Կոստա-
նյանի. Գ. պրակ. Թիֆլիս .1896:

1075. «Այս կեանքս է երազնմանս: Նույն տեղը: 3.—«Կա-
նանց անդ լացէ՛ք»: Նույն տեղը:

1076. «Ես եմ կորուսեալ ոչխար». Հայերգ, մեղեդիք, տաղք
և երգք. Հրատ. Արիստ. Վ. Տեկտնց: Թիֆլիս. 1882. էջ 14):

1077. Փոխե և ասա. «Այսօր մայր սիօն բանայ զառագաստ:
Նույն տեղում. էջ 23—24:

1078. Յորդուրակ. «Այսօր գշտոյ պանծալի»: Նույն տեղում.
էջ 24—15:

1079. Ուր վառն ավերման օրանս Արեւելյան: Ալիշան Ղ.—

* Զարպիսեան Գ.—Հայկական հին դպրության պատմութիւն (Գ.—
ԺԴ. դար): Երրորդ տպագ. Վենետիկ. 1897. էջ 699—700.

Հայապատում. պատմիչք և պատմություն հայոց: Վենետիկ. 1901. էջ 527—529:

1080. Ողբ խաչատրոյ Կեչառեցւոյ վասն իշխանաց. «Ջայա-
ահագին աւուրս, որ հասաք, ժամանակիս որ պատահեցաք...»
Արարատ. 1896. էջ 278:

1081. Կալիսթենէս. — Պատմութիւն Աղէքսանդրի Մակեդո-
նացւոյ: Վենետիկ. 1842. «Խաչատրոյ Կեչառեցւոյ Բարառ-
նութիւնք ի մահն Աղէքսանդրի» էջ 189—198:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1082. Ալիշան Ղ. — Հայապատում. պատմիչք և պատմություն հայոց: Վենետիկ. 1901. էջ 118:

1083. Ալիշան Ղ. — Սիսուան. համագրություն հայկական
Կիլիկիո և Լևոն Մեծագործ: Վենետիկ. 1870. էջ 389:

1084. Տաշյան Հ. — Ուսումնասիրութիւնք Ստոյն Կալիսթեն-
եայ վարուց Աղէքսանդրի: Վիեննա. 1892. էջ 85—137, 113,
124—127:

1085. Ե. Մ. — Խաչատուր Կեչառեցի և Ֆրիկ: Պայքար. 1923.
№ 108:

1086. Զարայիանայան Գ. — Հայկական հին դպրության պատ-
մություն: (Դ.—ԺԴ. դար): Երրորդ տպագ. Վենետիկ. 1897. էջ
698—700:

1087. Զամինյան Ա. — Հայ գրականության պատմություն:
Ն.-Նախիջևան. 1914. էջ 212—213:

1088. Կոստանյան Կ. — Նոր ժողովածու. միջնադարյան հայոց
տաղեր և ոտանավորներ. պրակ Գ. Թիֆլիս. 1896. էջ 28—30:

1089. Զամյան Մ. — Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշ-
խարհի մինչև ցամ տեառն 1784. ըստ աւանդելոյ ալլեայլ մա-
տենագրաց. ի վեց գիրս բովանդակեալ, և յերիս հատորս տրո-
հեալ: Հտ. Գ. Վենետիկ. 1786. էջ 96:

ԱՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Ստեփանոս Օրբելյանը XIII դարի երկրորդ կեսի հեղինակ
է. Իր ժամանակի քաղաքական խոշոր դեմքերից մեկն է. Քա-
ղաքական առաքելություններ է կատարել իտալիական խաների ու

իշխանների մոտ թեև նրա երկը Օրբելյան տոհմի մանրամասն պատմությունն է, բայց կան արժեքավոր տեղեկություններ նաև թաթար խաների ու իշխանների՝ Հայաստանում կատարած ավերածությունների մասին: Նրա «Պատմության» մեջ զնահատելի են հատկապես Սյունիքի տնտեսական կյանքի՝ գյուղատնտեսության ու սոսոցման ցանցի, Տաթևի վանքի դեմ եղած ապստամբությունների նկարագրությունները:

Արժեքավոր է Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի ս. Կաթողիկէին» չափածո աշխատությունը, որ մի նմանություն է Ներսես Շնորհալու «Եղեսիոյ Ողբին»:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ*

1090. Ողբ և Հառաչանք ի դիմաց Մօր մերոյ Սրբոյ Աթոռոյն էջմիածնի: Արարեալ ձեռոն Ստեփաննոսի Նախագահ Մետրապօլետին Սիւնեաց. որդւոյ Տարսաիճ Իշխանին ի խնդրոյ Շնորհապարդ Սուրբ Վարդապետին Խաչատրոյ Կեչառացւոյ ի ԶԽԸ թուականիս մերոյ: Նախիջևան. 1750. 80 էջ:

1091. Ստեփաննոսի արքեպիսկոպոսի Սիւնեաց պատմութիւն ի վերայ ծաղւան տոհմին Օրպէլեանց ի վերայ յարձակման Թաթարաց ի Հայս: [Հույս է ընծայել Ոսկան Տեր-Գևորգեան Հովհաննիսեանցի: Մոսկվա. 1858. 71 էջ:

1092. Ողբ և Հառաչանք ի դիմաց մօրս մեր սրբոյ Աթոռոյն էջմիածնի. Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց այցիլուի, որդւոյ Տարսաիճ Իշխանի, ըստ խնդրոյ վարդապետին Խաչատրոյ Կեչառացւոյ ի ԶԽԸ թուիս մերոյ: Կալկաթա. 1846. 48 էջ:

1093. Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց: Ի լոյս ընծայեաց հանդերձ ծանոթք. Կ. վ. Շահնապարեան. Պարիզ. 1859. 346 էջ:

1094. Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի պատմութիւն Տանն Սիսական: Ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին: Մոսկվա. 1861. 386 էջ:

1905. Ստեփանոս Օրպէլեանի Ողբ ի ս. Կաթողիկէն. բնագիրը առաջարանով և ծանոթություններով հրատարակեց Կարապետ Կոստանեանց: Թիֆլիս. 1885. 69 էջ:

* Ծանոթ.— Բացի հիշված զբեւրից Ստ. Օրբելյանն ունի նաև եկեղեցական գրվածքներ:

1097. Պատմութիւն Նահանգին Սիւսական արարեալ Ստեփան-
նոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեացի 'Ղուկասյան մատե-
նագարան: Թիֆլիս. 1910. 618 էջ:

1097. Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց Նախագահ Արհի Եպիս-
կոպոսի՝ Հակածառութիւն Հնդդէմ Երկարնակացի Շարադրեալ 'ի
թուին Հայոց ԶԾԱ: 'ի Կաթողիկոսութիւն Գրիգորի Անաւարդեցւոյ:
Եւ այժմիկ տպագրեցեալ: Կ. Պոլիս. 1756:

ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1098. Из Истории князя Стефана Орбелян, митрополита Сюнийского, писавшего в конце XIII века, Вторая часть LXV главы: О происхождении и судьбах княжеского рода Орбелян. В книге: История монголов по армянским источникам. Вып. I. Перевод и объяснения К. П. Патканова. С. Петербург. 1873. стр. 29—54.

1099. Глава LXIX История Стефана Сюнийского. О вла-
стителях, царствовавших после Аргун-хана и о событиях, совершив-
шихся в их время. В книге: История монголов по армянским
источникам. Вып. I. Пер. и объяснил К. П. Патканов. С. Птер-
бург. 1873. стр. 54—65.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1100. Այիշան Դ.—Հայապատում. պատմիչք և պատմություն
հայոց: Վենետիկ. 1901. էջ 116—118

1101. Զամինյան Ա.—Հայ դրականության պատմություն:
Ն.Նախիջևան. 1914. էջ 207:

1102. Զարայեանայան Գ.—Պատմություն հայ դպրության
նոր մատենագրություն: Վենետիկ. 1905. էջ 87—106:

1103. Ստեփանոս Օրբէլեանի Ողբ 'ի ս. Կաթողիկէն. [տեո
Կարապետ Կասառնյանի առաջարանը և ծանոթությունները]:
Թիֆլիս. 1885. 69 էջ:

1104. Ստեփանոս Օրբէլեան.—Պատմութիւն Նահանգին Սի-
սական: Թիֆլիս. 1911. 61 էջ: [Գրախոս. Մ. Հապոպյան]: Հանդ.
Ամս. 1912. էջ 87:

1105. Овсеян Г. архим.—Потомство Тарсаича Орбеляна и
Мина Хатуны. С. Петербург. 1913.

ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ ԿՐՈՒԿՈՍՅԻ

Հեթում պատմիչը հայտնի է նաև Անտոն վարդապետ անունով. (Haythonus monachus): Ներքևում հիշված պատմությունը գրել է 14-րդ դարի սկզբին: Եղել է Հռոմում. Կղեմես 5-րդ պապը նրան առաջարկել է գրել Արևելքի պատմությունը հատկապես՝ մոնղոլների, ասորիների, Կիլիկիայի ու Պաղեստինի պատմությունը: Ընդունելով հանձնարարությունը, Հեթումը թելադրում է Նիկողայոս Ֆալկոնին իր պատմությունը ֆրանսերեն լեզվով 1307 թվին:

Այդ պատմությունն իր նկարագրություններով ունի խոշոր պատմական, աշխարհագրական նշանակություն, տալիս է Հեթում թագավորի պատմությունը: Հեթում պատմիչը թողել է նաև արժեքավոր մի գործ՝ ժամանակագրություն, որ գրել է հայերեն, 1296 թվին և ընդգրկում է 1076—1307 թվականների պատմական դեպքերը:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1106/7. Լատիներեն (բնագիրը).—Liber historiarum partium orientis Haythono auctore. Բազել. 1535. 1555.

1108. Հեթում պատմիչ. [Պատմութիւն] Թաթարացի Յեղեալի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձևոն Հ. Մկրտիչ աթոռակալ վարդապետի Աւդերեան: Վենետիկ. 1842. 76 էջ. [շարունակությունը 77 էջից 90]. «Ժամանակագրութիւնք երեք հարիւր և մեկ ամաց կարճ ի կարճոյ հաւաքեալ ի պանազան պատմութեանց Հայ, Ֆրանկ և Ասորի. շարադրեալ պարոն Հեթմո տեառն Կոռիկոսոյ»:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1109. Ալիշան Ղ.—Շիրակ. տեղագրություն պատկերադույց: Վենետիկ. 188 . էջ 96:

1110. Ալիշան Ղ.—Սիսուան. համագրություն հայկական Կիլիկիո և Լևոն Մեծագործ: Վենետիկ. 1885. էջ 84, 337, 340, 371, 518, 510:

1111. Ալիշան Ղ.—Շնորհալի և պարագա յուր: Վենետիկ-
1837. էջ 483:

1112. Զարպիսնալյան Գ.—Պատմութիւն հայերեն դպրու-
թյան: Հտ. Բ. Նոր մատենագրութիւն: Վենետիկ. 1905. էջ 107:

1113. Չամչյան Մ.—Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշ-
խարհի մինչև ցամ տեառն 1784. ըստ աւանդելոյ ալլևայլ մատե-
նագրաց. ի վեց գիրս բովանդակեալ, և յերիս հատորս սրոհեալ:
Վենետիկ. 1786. հտ. Գ. էջ 279, 293, 300:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՐԴԵԼ

Դարդելը Ֆրանսիացի է. նա ժամանակակից է եղել Կիլի-
կիայի վերջին թագավոր Լևոնին և եղել է վերջինիս քարտուղարը:

Իր պատմութիւնը գրել է զլխավորապես լսած և տեսած
ղեպքերի ժառանգ: Գնահատելի են մանաւանդ նրա հաղորդած
տեղեկութիւնները Կիլիկիայի Լուսինյան թագավորութիւն մա-
սին (1340—1380 թ. թ.): Դարդելի ժամանակագրութիւնը հայտ-
նաբերվել և 1886 թ. տպագրվել է Ֆրանսերեն—Recueil, des
Historiens des Croisades, documents arméniens t. II-ում:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1114. Յովհաննու Դարդելի ժամանակագրութիւն հայոց: [Կ.
Եղյանի առաջարանով]: Ս. Պետերբուրգ. 1881 ՅԱ + 204 էջ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1115. Ողիսիս Ռոպէյտ.—Յովհաննու Տարտելի Տարտիպոլսոյ
Էպիսկոպոսի ժամանակագրութիւն հայոց. սւսումնասիրութիւն.
[Թարգ.]. Բաղմավեպ. 1882. էջ 105—116:

1116. Դարդելի Հովհաննես. գրաբառ թարգմանութեամբ
Սորեն արքեպ. Նար-Բեյի և Նորայր Բյուզանդացու. հառաջա-
րանով Կարապետ Եղյանի: Ժամանակագրութիւն հայոց: Հրատ.
Թիֆլիզի ընկ. հայերեն գրքերի հրատարակութեան: Ս. Պետեր-
բուրգ. [Դրախոս. Ս. Սարգսյան]: Մուրճ. Թիֆլիս. 1891. № 1. էջ
101—105:

1117. Սի ակնարկ «Հովհաննու Դարդելի ժամանակագրութիւն հայոց» նոր հրատարակութեան վրա: [Ստորագրութ. Ա.]. Արևելյան մամուլ. 1891. մարտ. էջ 121—127:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ

Գրիգոր վարդապետ Տաթևացին (1340—1411 թ. թ.) աշակերտել է Հովհաննես Որոտնեցուն: Ուսուցիչ է եղել Ապրակունաց վանքում, իսկ հետագայում՝ Տաթևում: Նրա գրվածքները կրոնական-իմաստասիրական բնույթի են: «Հարցմանց» գիրքը գրել է 1389 թվին, ունի մեծ և փոքր հատոր, հիմնականում ուղղված է ունիթոոսերի դեմ: «Քարոզգիրքը» 2 հատորի բաժանված մաս 200 քարոզներ են, որոնց մեջ երևում է ժամանակի սխուլաստիկ ուղղությունը: Բացի կրոնական մի շարք գրվածքներից ունի նաև՝ Պորփյուրի, Արիստոտելի, Դավիթ Անհաղթի փիլիսոփայական գրվածքների մեկնությունները:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1118. Գիրք Հարցմանց երիցս երանեսլ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն: Տպագրեցեալ օգնականութեամբ սբ. Թադէոսի Առաքելոյն, և սրն. Գրիգորի մերոյ Լուսաւորչին: Կոստանդնուպոլիս. ՌՃՀԸ. 1729. 808 էջ:

1119. Գիրք որ կոչի Ոսկէփորիկ: Արարեալ սրբայ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն եօթնալոյս վարդապետի. Կ. Պոլիս. ՌՃՂԵ. 592 էջ:

1120. Քարոզգիրք. Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն եօթնալոյս վարդապետի: Կ. Պոլիս. (ՌՃՂ). 1741. 740 էջ:

1122. Քարոզգիրք. Գիրք քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն եօթնալոյս վարդապետի: Պոլիս. (ՌՃՁԹ.). 1730. 747 էջ:

1122. Գիրք Պորփյուրի որ կոչի Ներածութիւն: Յորում պարունակին վերծանութիւնք, ամենիմաստ Դատի Անյաղթ փիլիսոփայի, և լուծմունք սրբոյն Գրիգորի Տաթևացոյ [Բ. էջից]

Գիրք ներածութեան և վերծանութեան և նոցին լուծման: Տպագրեցեալ ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու Սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց: Եւ ի Յառաջնորդութեան Նոր ջողացու Տն. Յակոբայ Արքեպիսկոպոսի: Եւ ի Թաղաւորութ. Օգոստափառ Տն. Երկրորդի Հերակլայ Բագրատունւոյ Արքայի վրայ: .. Մաղրաս. 1793. 413 էջ. [Տպարան Տ.-Հարություն Շմավոնյան Շիրազեցվո]:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1123. Զարգեանալյան Գ.—Պատմություն հայ դպրության: Նոր մատենագրություն: Վենետիկ. 1905. էջ 212—220:

1124. Զամչյան Մ.—Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև զամ տեսուն 1784. ըստ աւանդելոյ ալլեալ մատենագրաց. ի վեց գիրս բովանդակեալ, և յերիս հատորս տրոհեալ: Վենետիկ. 1786. հտ. Գ. էջ 450, 455:

1125. Օրմոնյան Մ. եպ.—Աղգապատում: Հայ ուղղափ. եկեղեցվո անդքերը սկզբից մինչև մեր օրերը հարակից աղգային պարագաներով պատմված: Հտ. Բ. Կ. Պոլիս. 1912. էջ 1981—1982, 2019—2032:

ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՅԻ ԾԵՐԵՆՑ

Գրիգոր Խլաթեցի «որդի Ծերին» կամ Ծերենցը ապրել է 14-րդ դարի վերջերին և 15-րդ դարի առաջին քառորդում (1350—1425 թ. թ.): Նրա ծննդավայրն է Խլաթը, զրա համար էլ կոչվել է նաև Խլաթեցի: Գրիգոր Տաթևացու հետ միասին սովորել է Երնջակ գավառի Ասրակունյաց վանքում «մեծ վարժապետ» Հովհան Որոտնեցու մոտ: Ճանապարհորդել է Երուսաղեմ և այլ տեղեր: Ծերենցի ժամանակակիցները՝ Խովմա Մեծոփեցին և Առաքել Սյունեցին մեծ դովեատով են խոսում նրա մասին՝ անվանելով «մեծ ուսուցիչ», որ «յիսուն և հինգ տմ գիրս գրեաց տիւ և գիշեր, անհանգիստ աշնութեամբ»:

Գրիգոր Խլաթեցի Ծերենցն իր պատմական վիպասանու., թյան մեջ («Յիշատակարան աղէտից Գրիգորի Խլաթեցւոյ») իրրե ակնատես, պատմում է Լենկթեմուրի և նրա հաջորդների սոսկալի ավերածությունների մասին (1386—1422 թ. թ.): «Յի-

շատակարան աղէտից»-ը ութուտյան բանաստեղծութիւնն է: Գրիգոր Խլաթեցին ունի նույնպէս ճառեր, խրատներ և տաղեր:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1126. Յիշատակարան աղէտից Գրիգորի Խլաթեցւոյ. պատմական վիպասանութիւն: Հրատարակեց Գր. Խալաթյանց: (Արատապատ Արարատ ամսագրից). Վաղարշապատ. 1897. ԺԴ + 25 էջ:

1127. Յիշատակարան աղէտից ի ժամանակի մերում զորասացեալ է Գրիգոր վարդապետի, որ մականունն Ծերենց կոչի, Խլաթեցի: Ալիշան Ղ. Հայապատում. պատմիչք և պատմութիւն հայոց: Վենետիկ. 1901. էջ 563—568:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1128. Ալիշան Ղ.—Հայապատում. պատմիչք և պատմութիւն հայոց: Վենետիկ. 1901. էջ 123—125:

1129. Բաբայան Լ.—Հայ գրչագիրներ: Ազգագրակ. հանդ. Թիֆլիս. 1897. Բ. գիրք. էջ 281—284:

1130. Զամինյան Ա.—Հայ գրականութեան պատմութիւն: Նոր-Նախիջևան. 1914. էջ 217:

1131. Խառատյան Ա. եպ.—Հավելված Գրիգոր Խլաթեցու պատմական վիպասանութեան: Արարատ. 1897. էջ 411:

1132. Խալաթյան Գր.—Յիշատակարան աղէտից Գրիգորի Խլաթեցւոյ. պատմական վիպասանութիւն: (Տես Նախարանը) Կա նույնպէս՝ Արարատ. 1897. էջ 174—176, 411—413:

1133. Զամչյոն Մ.—Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784. ըստ աւանդելոյ ալլեայլ մատենագրաց. ի վեց գիրս բովանդակեալ, և յիրիս հասորս տրուհեալ: Վենետիկ. 1786. հտ: Գ. էջ 451, 452:

1134. Օրմանյան Մ. եպ.—Ազգապատում: Հայ ուղղափ. եկեղեցւո անցքերը սկզբին մինչև մեր օրերը. հարակից ազգային պարագաներով պատմված: Կ. Պոլիս. 1912. հտ. Բ. էջ 2058—2059:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

Հովհաննէս Թլկուրանցին ծնվել է Թլկուրան կամ Թուլգուրան ավանում, որ գտնվում է Միջագետքում, Դիարբեքիր կամ Ամիդ քաղաքից հարավ: 1489—1525 թվականներին Հովհաննէս

Թլկուրանցին Սսում կաթողիկոս է եղել (Հովհաննես Բ. անունով)։ Նրա երգերից իմանում ենք, որ հասել է խոր ծերության։ Տիրապետել է՝ Թուրքերենին, պարսկերենին, տեղյակ է եղել Արևելյան եղանակներին։

Մինչև կաթողիկոս դառնալը եղել է աշուղ (ըստ Կ. Կոստանյանի)։ Հակառակ միջնադարյան կրոնամիստիկական ուղղության, Հովհաննես Թլկուրանցու սիրո երգերի մեջ կան արժեքավոր պատկերներ։ Նա իր սիրունուն դրվատում է՝ «Ծով-ծով աչքեր», «Կեռ կամար ունքեր», «լուս սպիտակ ճակատ», «լար լուսեղեն շրթունքներ», «մարգարտաշար ատամներ», «ճոճան շողկտակ վիզ» պատկերավոր արտահայտություններով։

Հովհաննես Թլկուրանցին ասում է, որ կանայք «ականակուռ զարդ են» արեղաների համար, վարդապետը նոցա տեսնելիս «մոռանայ զուսումն ու շատ գրեանք»։ Հ. Թլկուրանցին ապրում և մտածում է ինչպես աշխարհիկ մարդ։ Ունի գարնան գեղեցկության և բնության վայելչությունների գողտրիկ նկարագրություններ։

Իր բարոյախրատական երգերում Հովհաննես Թլկուրանցին խարազանում է կեղծավորությունը, լեզվաղարությունը, կնամուլությունը և այլն։

Պատմական նշանակություն ունի նրա «Տաղ քաջ Լիպարտին» գրվածքը, ուր նկարագրում է 1368 և 1370 թվականներին Տարսոնի ամիրա Մանչակի արշավանքները, Սիս քաղաքի ավերումը և այդ կռիվներում զորավար Լիպարտի հերոսությունները։

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1135. Կոստանյան Կ.—Հովհաննես Թլկուրանցին և յուր տաղերը։ Թիֆլիս. 1892. 59 էջ։

Հրատարակված են հետևյալ երգերը.

1. «Գենայ բահար, այլևի բահար»։—2. Վասն սիրոյ «Արև նման շողշող կտաս»։—3. Տաղ սիրո «Ասի՛ սիրէ՛ զիս, ծով աչքեր»։—4. «Լոյս երեսացդ է խիստ փափուկ»։—5. «Սիրով մի սպաներ»։—6. «Ահա եղև պայծառ զարուհ»։—7. «Ես զձեզ տեսայ սիրով նստած»։—8. «Աչիրդ է թուխ ու պէտ»։—9. Տաղ վասն արրեցութեան. «Քեզ հոգևոր խրատ մի է»։—10. Վասն սուտ սիրելիաց. «Իմ սիրտ, լսէ ու ականջ արւ»։—11. Ի վերայ մահուան. «Քանի՛

Ղազար Թոխաթենցին նույնպես ականատես է եղել Թոխաթի ավերմանը (1602—3 թ. թ.), Նա գաղթել է Ուկրաինա (Եազլովկա քաղաք 1605—6 թ. թ.): Բացի ձեռագրերի ընդօրինակումից, զրեղ է տաղեր, որոնցից Ն. Ակիճյանը՝ իր «Հինգ պանդուխտ տաղասացներ» (Վիեննա, 1921. էջ 205—216) զրբում հիշատակում է հետևյալները՝

ՏՊԱԿՐՎԵԼ ԵՆ

1334. «Գովասանք Կարապետ արքեպիսկոպոսի ի Թոխացի Ղազար եպիսկ. ասացեալ»—2. «Գովասանք ի վերայ Թոխաթ քաղաքին»—իւր հայրենիքի գովեստն է անում: 3. «Ողբ ի վերայ Կոտորածին Թոխաթի» և 4.—«Ողբ ի վերայ սովոյն Թոխաթի»—նվիրված են Թոխաթի 1602 թ. Կոտորածին և դրան հաջորդող սովին: Այս տաղերից միայն կտորներ է հրատարակել Ն. Ակիճյանը վերը հիշված գրքի մեջ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1335. Ակիճյան Ն.—Հինգ պանդուխտ տաղասացներ: 1. Վերթանես եպիսկոպոս Սոնկեցի:—2. Մինաս Դպիր Թոխաթենցի:—3. Ստեփանոս երեց Թոխաթենցի:—4. Հակոբ երեց Թոխաթենցի:—5. Ղազար եպիսկոպոս Թոխաթենցի: Կենսագրական տեղեկություններ և բնագրեր: Վիեննա. 1921. թ. 223 էջ:

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՅԻ

Մարտիրոս Ղրիմեյին (1605--1683 թ. թ.) աշակերտել է ժամանակի հայտնի տաղասաց Ստեփանոս Թոխաթեցուն: Պերթվածներին հիմնական մոտիվը սուր երգիծանքն է: Նա ծագրում է ժամանակակիցների բարքերը, մերկացնում է կղերի կաշառակերությունը, ազահությունը, նկարագրում է աստիճանավորներից կեղեքվող ժողովրդի կյանքը: Ունի նաև բնության գեղեցիկ նկարագրություններ:

Մարտիրոս Ղրիմեյին ոտանավորով գրել է «Ժամանակագրութիւն Հայոց թագաւորների» որի վերջին մասը կիլիկիային է վերաբերում և Դյուլորեն թարգմանել է ֆրանսերեն՝ Recueil des Croisades-ի մեջ:

ՏՊԱԳՐՎԱԾ ԵՆ

1336. Տաղ գինովո. «Այսօր խմենք...»: Բազմավեպ. 1875. էջ 106:

1337. Տաղ ուրախության:—Այսօր տօնեմք: Ճոաքաղ. 1859. էջ 45—46:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1338. Ակինյան Ն.—Հինգ պանդուխտ տաղասացների: Վիեննա. 1921. էջ 205—216. Կոստանյան Կ. Նոր ժողովածու: Բ. պրակ. էջ 47—49, 49—52 [Մարտիրոս Խարայիսարցի անունով]:

1339. Լեո.—Հայկական տպագրություն: Մեր կյանքը, դրականությունը անցյալում: Հտ. I. XVI—XVII դար: Արտատպած Մշակ լրագրից: Թիֆլիս. 1901. էջ 284—288:

1340. Պատկանյան Ք.—Մարտիրոս Ղրիմեյու ժամանակագրությունը: Փորձ. 1880. № 1. էջ 36:

1341. Տաշյան Հ.—Յուդայի հայերեն ձեռագրաց մատենագրության Մխիթարյան ի Վիեննա: Վիեննա. 1895. էջ 1034, 1112:

1342. Դյուրոյան Հ.—Մարտիրոս Ղրիմեյի կամ Կաֆացիի տաղերը—Թրակիո և պոլիկարահայոց վրայոք: Բազմավեպ. 1929:

ԳՐԻԳՈՐ ԴԱՐԱՆՂԱՅԻ

Գրիգոր Դարանդացին (1576—1643 թ. թ.) ունի ինքնա-
կենսագրություն կամ ժամանակագրություն, որ ընդգրկում է
1595—1640 թվականները եղած զեպքերի մասին կարևոր տեղե-
կություններ:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1343. Ժամանակագրութիւն Գրիգորի վարդապետի Կամախեց-
ւոյ կամ Դարանաղցւոյ: Հառաջարանով և հալելովածներով հրա-
տարակեց Մեսրոպ վ. Նշանյան: Երուսաղեմ, 1915 շ. 667 էջ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1344. Ալիշան Ղ.—Այրարատ: Բնաշխարհ Հայաստանյայց
Վեհեպոկ, 1890, էջ 164, 578:

1345. Աեինյան Ն.—Ժամանակագրութիւն Գրիգոր վարդա-
պետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ: Մեկ նմանատիպ պատ-
կերով, հառաջարանով և հալելովածներով: Հրատ. Մեսրոպ վ.
Նշանյան: Երուսաղեմ, 1915, էջ շ. 667. [Դրախոսսական]: Հանդ.
Ամս, 1920, էջ 184—188:

1346. Օրմանյան Մ. եպ.—Ազգապատում: Հայ ուղղափ. եկե-
ղեցւո՞ւ անցքերը սկզբից մինչև մեր օրերը հարակից ազգային
պարագաներով պատմված: Հտ. Բ. Կ. Պոլիս, 1912, էջ 2317—
2318, 2494—2495:

ԶԱԲԱՐԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ

Զաքարիա Սարկավազը XVII դարի պատմիչ է: Իր աշխա-
տության Ա հատորում համառոտ պատմում է հին պարսից,
Աղեքսանդր Մեծի, Արշակունիների, Սասանյանների մասին, ա-
պա անցնում է մեկեն Ճհանշահի պատմությանը, որ 1438 թվին
իշխում էր Պարսկաստանում: Բ. հատորի մեջ ավելի մանրա-
մասը նկարագրում է օսմանցիների և պարսից պատերազմները,
հա, ժողովրդի կրած կոտորածները, քայքայումը:

Կարևոր է երևանի խանության և Առարատյան դաշտի ժողովրդի քաղաքական-տնտեսական դրուժյան նկարագիրը:

Կան նաև հետաքրքիր տեղեկություններ հայերի կենցաղի, սովորությունների մասին:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1347. Զաքարիա Սարկաւազի պատմագրութիւն: Վաղարշապատ 1870. Ա. հտ. 87 էջ. Բ. հտ. 143 էջ. Գ. հտ. 46 էջ.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1348. Ալիշան Ղ.—Հայապատում. պատմիչք և պատմութիւն հայոց: Վենետիկ. 1901. էջ 132:

1349. Ալիշան Ղ.—Այրարատ. բնաշխարհ Հայաստանյայց: Վենետիկ. 1890. էջ 41, 174, 295:

1350. Կենսագրութիւն Զաքարիա պատմագրի սարկաւազի Հովհաննավանա: Արարատ. 1870. էջ 151—155:

1351. Զարայեանուլյան Գարեգին.—Հայ դպրության պատմութիւն: Նոր մատենագրութիւն: Վենետիկ. 1905. էջ 137—141:

1352. Լեո.—Հայկական տպագրութիւն: Մեր կյանքը, գրականութիւնը անցյալում: Հտ. I. XVI—XVII դար: Արտատպած Մշակ լրագրից: Թիֆլիս. 1901. էջ 279—284:

ՀԱԿՈՒ ԿԱՐՆԵՑԻ

Հակոբ Կարնեցին ապրել է XVII դարում և նկարագրել է 1622—1662 թ. թ. քաղաքական դեպքերը, էրզրումի նշանավոր անցքերը: Ներքևում հիշատակված «Բանս է զՎերին Հայոց ի Յակոբ Երիցուէ» գրվածքը մի տեղագրութիւն է էրզրում քաղաքի և նրա շրջակա գավառների, որտեղ նկարագրում է նաև ժողովրդի տնտեսական կյանքը, կենցաղային պայմանները, վաճառականութիւնը, փաշաների վարչական կարգերը, դատավարութիւնը և այլն: Այդ նյութը ունի պատմական արժեք:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1353. Բանս է զՎերին Հայոց ի Յակոբ Երիցուէ: Կ. Կոստանյանի—Հակոբ Կարնեցի. տեղագիր Վերին Հայոց: Հիշատակարան Ժէ. դարու: Վաղարշապատ. 1903. էջ 9—61:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1354. Կոստանյան Կ.—Յակոբ Կարնեցի. տեղագիր Վերին Հայոց: Հիշատակարան ժէ դարու: Վաղարշապատ. 1903. 75 էջ:

ՊԵՏՐՈՍ Վ. ՂԱՓԱՆՅԻ

Պետրոս Ղափանցին սիրո երգիչ է: Նրա երգերը ուսումնասիրող Ն. Քարամյանը գրում է. «Նա թեև այլաբանական քողով է ծածկում, սակայն այդ քողն այնքան թափանցիկ է, որ ամեն ոք կարող է դրա հետևը ծածկված զգացմունքը տեսնել: Ղափանցու երգերի զրեթե կեսից ավելին նվիրված է վարդի և սլապուլի սիրոյն և Աստվածածնին, որոնք ամենն էլ սիրոյ երգեր են»*)

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1355. Գրգուլի կոչեցեալ երգարան: Ասացեալ 'ի յետնորդ միարանէ՝ մօրն լուսոյ սրբոյ էջմիածնի 'ի Պետրոսէ վարդապետէ Ղափանցոյ: Կ. Պոլիս. 1772. 172 էջ:

1356. «Աղաղակ խորհրդարար՝ առ բարձրեալն Աստուած ի Խաչին, վասն փրկութեան մարդկանց ազգին»: Տեկանց Ար. վրդ. Հայերգ. մեղեդիք. տաղք և երգք: Թիֆլիս. 1882. էջ 80—81:

1357. Ալեկոծութենէ հոգւոյս. «Աշխարհս է ահադին ծով լայնատարած»: Արարատ. 1895. էջ 15:

1358. զՎարդէ իմանալոյ: «Ի հրոյ սիրոյդ վառեալ հոգիս՝ վառի և ոչ հովանայս: Արարատ. 1895. էջ 15:

1359. զՎարդէ և զլուսնահաւուն պարզ բանիւ: «Ծիլ ծիլ ոսկի է վարդի թերթերն»: Արարատ. 1895. էջ 16:

1360. Տաղ ուրախութեան. «Պայծառ արփին արդ բարձրացաւ»: Մկրյան Մ. XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն: Երևան. 1938. էջ 207:

1361. «Փութա՝ առ մեղ, նախշուն կաքաւ»: Մկրյան Մ. XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն: Երևան. 1938. էջ 208—209:

* Քարամյան Ն.—Հին հայ երգիչներ: Արարատ. 1895. էջ 12—16.

1362. «Առաւոտեան քաղցր և անուշ հովերն» Միանսարյան
Մ. Մ. Քնար հայկական. Ս. Պետերբուրգ. 1868. էջ 417—426:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1364. Միանսարյան Մ. Մ.—Քնար հայկական. Ս. Պետեր-
բուրգ. 1868. էջ 417—426:

1365. Տեկանց Ար. վրդ.—Հայերգ. մեղեդիք, տաղք և երգք:
Թիֆլիս. 1882. էջ 80—81:

1366. Քարամյան Ն.—Հին հայ երգիչներ: Արարատ. 1895.
էջ 12—16:

ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՍՊԵԿ ԵՐԵՅ ԿԱՓԱՅԻ

Խաչատուր Խաապեկը (1610—1686) Ղրիմի Կաֆա քաղա-
քից է, Խաապեկ մականունով: Գործել է իբրև ուսուցիչ, գրիչ,
ծաղկող և կաղմող: Ժամանակակիցները անվանում են, «Իիլիսո-
փա ներհուն», «բանաձին միտք», «պետ երաժշտոց» ևլն, որից
երևում է, որ նա եղել է իր ժամանակի աչքի ընկնող բանաս-
տեղծը և երգիչը: Մեզ են հասել 1 գանձ և 6 տաղեր, որոնք
գրված են պարզ լեզվով. բնության գովքն են երգում, սիրո
երգեր են:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1367. Տաղ ի վերայ վարդին և անուշադուտ ծաղկանց. ի
Խաապեկէ ասացեալ: Կոստանյան Կ., Նոր ժողովածու. հտ. Բ.
Թիֆլիս. 1892. էջ 11—14. Տեկանց Ար. վրդ.—Հայերգ. մեղեդիք,
տաղք և երգք: Թիֆլիս. 1882. էջ 119:

1368. Խաապեկի ասացեալ ի վերայ սուրբ Աստուածածին:
Կոստանյան Կ., Նոր ժողովածու. հտ. Գ. Թիֆլիս. 1896. էջ. 15:

1369. Տաղ սիրոյ և ուրախութեան. Կոստանյան Կ. Նոր ժո-
ղովածու. հտ. Գ.: Թիֆլիս. 1896 էջ. 12—15:

1370. Տաղ Ս. Աստվածածնի. Կոստանյան Կ., Նոր ժողովածու.
հտ. Դ. Վաղարշապատ. 1903 էջ 15:

1371. Ողբ ասացեալ տաղիւ չափիւ և ոտանաւոր՝ կսկիծ դառն ժամանակի... [1642] Հանդ. Ամս. 1935. էջ 343 [մի կտոր]:

1372. Տաղ ի վերա վարդին: Մ. Սկրյան.—XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն: Ընտիր նմուշներ: Երևան. 1938. էջ 204—205:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1373. Պոտուրյան Մ.—[խմբ.] Դիցաւան: Գիրք Ա. Պուքրեշ. 1923. էջ 138—142:

1374. Ալիքյան Ն.—Խաչատուր Խասպեկ երեց Կաֆացի տաղասաց: Հանդ. Ամս. 1935. էջ 336—344:

ՍԻՄԵՈՆ ՎՐԴ. ԱՊԱՐԱՆՑԻ

Սիմեոն վ. Ապարանցին ապրել է XVI դարում Մոկաց երկրի Ապարանք կամ Ապարանից գյուղում: Նրա գրած «Վիպասանությունը» Լազար Փարպեցու պատմությունից մի համառոտություն է, գրված չափածո: Այս գրվածքում պատմվում է Պահլավունիների տոհմի և Մամիկոնյանների մասին: Վիպասանությանը կցված է՝ 1) «Յիշատակարան և տաղաչափութիւն Պատմութեան Ապարանից, Ս. Նշանի, քաղեալ ի հեղինակութենէ Նարեկացւոյն Գրիգորի», 2) «Ողբ ի վերայ Մեծոփոյ ս. Ուխտին», 3) Համառոտ «Յիշատակարան վասն առման Դաւրիժոյ յՕսմանայ և 5) «Ողբ ի վերայ Աղգիս Հայոց»:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1375. Սիմեոն վարդապետի Ապարանցւոյ Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն դարմի և Մամիկոնեանցն սեռի: Վաղարշապատ. 1870. 162 էջ:

1376. Ողբ ի վերայ Մեծոփոյ ս. Ուխտին: Արարատ. 1870:

1377. Ողբ ի վերայ տառապեալ աղգիս Հայոց: Արարատ. 1870:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1378. Ալիշամ Ղ.—Հայաստանում. պատմիչք և պատմություն հայոց: Վենետիկ. 1901. էջ 127—128:

1379. Զարպեանալլան Գ.—Հայկական հին դպրության պատմություն: Բ. հտ. Նոր մատենադր. Վենետիկ. 1878. էջ 250:

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՅԻ

Առաքել Դավրիժեցին ծնվել է XVI դարի վերջերին, մահացել է 1670 թվականին: Նրա ծննդավայրն է Թավրիզը (Դավրիժ), սովորել է էջմիածնում: Իր պատմության երեսուներորդ զլխից տեղեկանում ենք, որ նա, իբրև նվիրակ, շրջել է Հայաստանի շատ վայրեր և Փոքր Ասիայում:

Առաքել Դավրիժեցին գրել է վաթսուն տարվա պատմություն՝ 1602—1662 թվականները: Նա պատմում է Պարսկական Շահաբաս թագավորի և այլ պարսիկ խաների Հայաստանում կատարած ավերածությունները, մանրամասը նկարագրում է հայերի բռնի դադթեցումը Արարատյան դաշտից դեպի Պարսկաստանի խորքերը, էջմիածնի ու կղերի պարսիական կռիվների մասին և ապա կանգ է առնում երկրի կուլտուրական շինարարության վրա: Դավրիժեցին գրում է իբրև ականատես և կամ անմիջորեն իր նյութը քաղում է ականատեսներից: Նա իր պատմության վերջում կցել է հետաքրքիր տեղեկություններ՝ թանկագին քարերի տեսակների մասին:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1380. Գիրք պատմութեանց. շարադրեսլ վարդատեսին Առաքելոյ Դաւրէժացւոյ: Սակս դիպուածոց Հայաստանեայց և ևս դաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառի սկսեալ ի թըռւոյն Հայոց 1054 մինչև յաւարտ պատմադրութեանս. այլ և ի յիշումն ածեալ մասնաւորաբար աստի և անտի... Եւ վերակազմութեամբ Տեսուն Ոսկան Երևանեցւոյ: Ամստերդամ. 1669. 650 էջ:

1381. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, սակս դիպուածոց Հայաստանեայց և ևս գաւառին Արարատայ և Գողթան գաւառի, սկսեալ ի ՌԾԴ. թուականէն Հայոց մինչև ի ՌՃԺԲ թ. էջմիածին. 1884. 524 էջ:

1382. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ սակս դիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառի, սկսեալ ի ՌԾԴ. թուականէն Հայոց մինչև ի ՌՃԺԲ. թ.:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1383. Ալիշան Ղ.—Հայապատում. պատմիչք և պատմություն հայոց: Վենետիկ. 1901. էջ 331—332:

1384. Զարպիհանալյան Գ.—Հայ դպրութեան պատմություններ. Նոր մատենագրություն: Վենետիկ. 1905. էջ 172—179:

1385. Զամինյան Կ.—Հայ գրականութեան պատմություն: Ն. Նախիջևան 1914. էջ 293:

1386. Патканов К.—Драгоценные камни, их названия и свойства по понятиям Армян в XVII веке. С. Петербург. 1873.

1387. Զամչյան Մ.—Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև զամ տեառն 1784. ըստ աւանդելոյ այլևայլ մատենագրաց. ի վեց գիրս բովանդակեալ, և յերիս հատորս տրուեալ: Վենետիկ. Ա. հտ. 1784. էջ 17:

ԴԱՎԻԹ ԲԱՂԻՇԵՅԻ

17-րդ դարի պատմիչ է Դավիթ Բաղիշեցին: Ունեցել է «Բանասէր» համեստ կոչումը. եղել է վարդապետ: Ունի պատմական ժամանակագրություն «Ծաղկաքաղ պատմութիւն Հայոց» վերնագրով, որ երկու մասի է բաժանւում.—ա. մասում տալիս է հայոց պատմությունը, օգտւելով՝ Մ. Խորենացու, Փավստոս Բյուզանդի, Զենոբ Դլակի, Հովհաննէս Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու, Սամվել Անեցու պատմագրություններին. իսկ վերջի շրջանի պատմությունը՝ օգտւելով Թովմա Մեծոփեցու պատմությունից: Իր ժամանակի դեպքերը տալիս է որպէս աւանատես: Միայն հատվածներ են հրատարակւել Ղ. Փիրղալեմյանի հավաքածուի մեջ:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1388. Դավթի բանասիրի Բաղիշեցւոյ ծաղկաքաղ արարեալ ի բազում պատմագրաց վ. Յարեթի և սուղ ինչ զՍիմայ և զԲամայ, ստոյգ գտակաւ, բազում աշխատութեամբ, ընտրելով զլաւն և զպիտանին, անսխալապէս շնորհօք:

Յուցակ ձեռագրաց Խ. Վ. Դադյանի. (Կազմեց Հակոբ Թովհնյան): Վաղարշապատ. 1898. № 79. էջ 96—99.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1389. Կիլիկեցի.—Դավթ Բաղիշեցի: Արարատ. 1898. էջ 120—124.

1390. Փիրղալեմյան Ղ. վրդ.—Նոտարք հայոց: [Հավաքեց և հրատարակեց]: Կ. Պոլիս. 1888, էջ 86, 122—123, 148, 209.

ԱԶԱՐԻԱ ՎՐԴ. ՍԱՍՆԵՅԻ

Ազարիան XVII դարի առաջին կեսերի գրող է (մեռել է 1628 թ.): Նա աստղագետ է, տոմարագետ և տաղասաց:

Նա իր «Ողբ ի վերայ հարուածոց աշխարհին Հայոց» բանաստեղծութեան մեջ պատմում է Ճիլալի թուրք բանակների ասպատակութիւնները Հայաստանում:

Ազարիայի աշխատութիւնները մեծ մասով ձեռագիր են և գտնվում են Վիեննայի Մխիթարյան մատենադարանում: Ն. Ակինյանը (Հանդ. Ամս. 1936. № 7—9) հիշատակում է հետևյալ ձեռագրերը՝ «ա) Յաղագս գիտութեան երկնից բարձութեան և պարունակացն. բ) Յաղագս որքանութեան եօթնհազար և երկիր իւրացն. գ) Յաղագս գիտութեան Արեգական թաւալմանցն. դ) Վասն գիտութեան հինգ աւուրց Արարչութեան. ե) Յաղագս գիտութեան Հայոց թուականի. զ) Տօմար արեգական և լուսնի. է) Աշխարհացոյց Պտղոմէոսի. ը) Կարգ և թիւ կաթողիկոսաց Հայոց. թ) Հաւաքածո կանոնագրաց»:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1391. Ակինյան Ն.—Ազարիա վարդապետ Սասնեցի աստղագետ, տոմարագիր և տաղաչափ: Հանդ. Ամս. 1936. էջ 327—337:

ՀԱՎԵԼՎԱԾ № 1

Ներքևում նշված զրքում հրատարակված են երկու հիշատակարաններ, որ որոշ պատմական նշանակություն ունեն և գաղափար են տալիս, թե ինչպես 1662—1677 թ. թ. Լեհաստան գաղթած հայերը բռնությամբ դավանափոխ են արվել, և հայ ու լատին քարոզիչների դերը այդ գործում:

Հիշատակարանների հեղինակները լատին քարոզիչներ են, որ անձամբ մասնակցել են հայերի դեմ տարված հալածանքներին:

Գրքի մեջ ղեկավարված են հետևյալ նյութերը. 1. Հառաջարան (Կ. Եզյանի է-ՆԲ. էջ), 2. Առաքելի վարդապետի Դաւրիժեցւոյ Գիրք պատմութեանց (գլ. ԻԸ.), 3. Մատենադրութիւնք պատմութեան հայոց Լեհաստանի 4. Կարճառոտ տեղեկութիւնք զարդի վիճակէ զսկզբանէ և զծաւալմանէ Առաքելական քարոզչութեանն առ հայս Լեհաստանի, Վալախւոյ, մերձակայ աշխարհաց (Ալոյիսիոս Պիդու քարոզչի). 5. Ընդարձակ տեղեկութիւնք զմիանալոյ ժողովրդեանն հայոց Լեհաստանի ընդ կաթոլիկ եկեղեցւոյն. յամի տեառն 1676:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1392. Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հըռովմայ. ժամանակակից յիշատակարանք: Ս. Պետերբուրգ. 1884. ԿԸ+270+Ը էջ:

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1393. Այվազյան Գաբրիել արքեպ.— Նիկոլ եպիսկոպոս և պատմություն դարձին Հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկություն: Արարատ. 1877. էջ 7, 45, 84, 128, 167, 203, 214 և առանձին զրքով. Վաղարշապատ. 1877:

1394. Բաստամյան Վահան վ.— Իրավաբանական հետազոտությունք, ծանոթություններ Միլիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց: Վաղարշապատ. 1880. 420+ԺԲ էջ:

1395. Bischoff D-r F.— Ueber das alte Recht der Armenier in Polen. Oesterr. Blätter für Literatur. (Beilage zur Wiener Zeitung, 1857, №№ 28, 33, 37, 39).

1396. Bischoff D-r F.— Urkunden zur Geschichte der Armenier in Lemberg. Wien. 1864.

1397. Bischoff D-r F.—Das alte Recht der Armenier in Polen, in Sitzungsberichte der Kaiserl. Akademie der Wissenschaften. Wien. 1862, XL Band II Heft.

1398. Բժշկյան Մ.—Ճանապարհորդութիւնն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սիրելոց ի նախնեաց Անի քաղաքին. Վենետիկ. 1830. Բ. մաս.

1399. Իննիմյան Ղ.—Հնախոսութիւնն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի. Հտ. Առաջին. Վենետիկ. 1835. էջ 343—348.

1400. Նիկոլ Եպիսկոպոս և հալածանք նորա ընդդեմ Հայկազանց Լեհաստանի. Մասյաց Աղափնի. 1857.

1401. Միջնադեպ Հայոց ազգի պատմութենեն. Նիկոլ կամ Հայոց ազգի կրած տարաբաղդութիւնքը Լեհաստանի մեջ. Ս. Պետերբուրգ. 1864.

1402. Չամչյան Մ.—Պատմութիւնն հայոց ի սկզբանէ աշխարհի միջև ցամ տեառն 1784. ըստ ավանդելոյ այլևայլ մատենագրաց. ի զից գիրս բովանդակեալ, և յերիս հատորս տրոհեալ. Հտ. Գ. Վենետիկ. էջ 630—643.

1403. Տեղագրութիւնն Հայոց դաղթականութեան որք ի Մոլտովալաքիա, Հունդարիա և ի Լեհաստան. Ուղեորութիւնն յամի 1876. Արշակայ Մ. Ալթունյան. Ֆոքլան. 1877.

ԶԱԲԱՐԻԱ ԱԳՈՒԼԵՅԻ

Զաքարիան, Ագուլեցի մի վաճառական (1630—1691 թ. թ.), այցելելով Իրանի, Տաճկաստանի և Արևմտյան Եւրոպայի շուկաները, գրել է օրագիր՝ հետաքրքրական դիտողութիւններով:

Օրագրութեան մեջ կա ճանապարհորդած վայրերի և ուղիների նկարագրութիւնը, ժամանակագրական կարգով 1647—1681 թվականների մասին զանազան տեղեկութիւններ, իսկ վերջում Քրդունց ընտանիքի տոհմագրութիւնը:

Զաքարիա Ագուլեցու օրագրութիւնը Հայաստանի և հարեւոյսն երկրների մասին պարունակում է պատմական, տնտեսական, աշխարհագրական, ազգագրական հետաքրքիր տվյալներ:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1404. Ջաֆարիա Աղուլեցու Օրագրությունը: Հրատ. ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Երևան 1938. 199 էջ.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

1405. Дневник Закария Агулпеского. Изд. Армянского филиала Академии Наук СССР. Ереван. 1939. 159 стр.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1406. Լեո.—Հայկական տպագրություն: Մեր կյանքը, զբրականությունը անցյալում: Հտ. I. XVI—XVII դար. Արտատպած Մշակ լրագրից: Թիֆլիս. 1901. էջ 291—295.

ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻ ԲՅՈՄՈՒՐԱՅԱՆ

Երեմիա Չելեպին (1635—1695 թ.) հասարակական գործիչ և աշխարհիկ հեղինակ է: Կ. Պոլսում տպարան է հիմնել (1677 թ.) և զբբեր հրատարակել: Ըստ բանասիրական տվյալների՝ Վենետիկի, Երուսաղեմի զրադարաններում և Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանում կան հետևյալ ձևազիր աշխատությունները՝ 1. «Պատմութիւն համառօտ չորեքհարիւր տարւոյ Օսմանցւոց թաղաւորութեանցն, որ ի՝ Սուլթանէն մինչև այսմ Սուլթան Մուհամետս մ.թ. թաղաւորեն»։—2. «Թաղաւորութեան Օսմանցւոց համառօտիւ պատմութիւն»։—3. «Ոտիւ շարադրեալ անուանք թաղաւորաց Օսմանցւոց»։—4. «Պատմութիւն հրկիզման Կ. Պոլսոյ»։—5. «Պատմութիւն Ստամպոլոյ»։—6. «Համառօտ ստորադրութիւն Կ. Պոլսոյ նեղուցի»։—7. «Օրագրութիւն (1648—1663)»։—8. «Տարեգրական պատմութիւն»։—9. «Պատմական բանք իւրոյ ժամանակի յամի 1682»։—10. «Պատմութիւն նորո նահատակաց»։—11. «Վիպասանութիւն յԱպրօ Չելեպի»։—12. «Վիպասանութիւն յառումն Կրեաի կղզուց»։

Եղերը երկար ժամանակ հալածել է Երեմիա Չելեպի Քյոմուրճյանին: Նրա աշխատությունները, բացառությամբ «Սամալյուրյ պատմութեան» (մոտ 37 հատ.) մինչև հիմա էլ անտպ են:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1407. Երեմիա Չելեպիի Քյոմուրճեան Սամալյուրյ պատմութիւն: Հրատարակեց և ծանօթագրեց Ղոկտ. Թորգոմեան: Ա. հտ. Վիեննա, 1913: Բ. հտ. Վիեննա, 1932, 862 էջ:

ՌՈՒՍԵՐԵՆ ԹՄՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1407 ա. Антология Армянской поэзии с древнейших времен до наших дней. Под редакцией С. С. Арутюнян и В. Я. Кирпотина. Гос. изд. „Художественная литература“. Москва. 1940. стр. 303 [Иеремия Кемурджян.—Песня любви. Пер. В. Брисова.]

ՌՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1408. Ալիշան Ղ.—Հայապատում, պատմիչք և պատմությունն հայոց. Վենետիկ, 1901, էջ 133.

1409. Ալիևյան Ն.—Երեմիա Չելեպի Քյոմուրճյան, կյանքն և գրական գործունեությունը: Հանդ. Ամս. 1932, էջ 510, 624, 1933 թ. էջ 94. [Առանձին գրքով. Վիեննա, 1934].

1410. Զարպիսանյան Դարեգին.— Պատմություն հայերեն դպրության: Բ. հտ. Նոր մատենագրություն: Վենետիկ, 1905, էջ 360—362:

1411. Երեմյան Ս.—Երեմիա Չելեպի: Հանդ. Ամս. 1903:

1412. Ղեռ.—Հայկական տպագրությունը: Մեր կյանքը և գրականությունը անցյալում: Թիֆլիս, 1901, հտ. I, էջ 266—276:

1413. Իննիկյան Ղ.—Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի: Վենետիկ, 1804, հտ. I, էջ 62, 129—130:

1414. Նշանյան Մ.—Երեմյա Չելեպի Քյոմուրճյանի գանձնի մահ Հակոբ կաթողիկոսի. Հանդ. Ամս. 1933, էջ 588:

1415. Նշանյան Մեսրոպ Վ.—Օրագրություն Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի: Շողակաթ. հայապիտ. ժողովածու: Ա. գիրք. Վաղարշապատ, 1913 էջ 47—66:

1416. Չամչյան Մ.—Պատմություն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև պամ տեառն 1784. ըստ աւանդելոյ այլևայլ մատենագրաց ի վեց գիրս բովանդակեալ. և յերիս հասորս տրոհյալ: Վենետիկ, 1784, հտ. Գ. էջ 680, 688, 699, 700, 702, 710, 717, 718, 722, 723:

ԱՍԱԴՈՎ

Ղ. Ալիշանը իր «Յուզիկք հայրենեաց հայոց» գրքի Բ. հտ. 469 գրում է Ասապովի մասին, իբրև ժէ դարի տաղասացի: Համանական է, որ աշխարհական եղած լինի:

Ստույգ տեղեկություններ չունենք նրա կյանքի մասին: Տպագրված տաղերից երևում է, որ գրել է հոգևոր երգեր:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1417. Ուտանավորք. «Ո՞վ լոյսերամ դասք քահանայից»: Հանդ. Ամս. 1931. էջ 528.

ԶԵՌԱԳՐԵՐԻ ՄԵՋ

1. Տաղ դարնան ի վերայ բլրուլի: Զեռագ. Berlin, Or, Ms. oct, 446, 178 ա. Tubingen, Ma 98, 174 ա. (1668).

2. Տաղ առ սուրբ կոյսն: Զեռագ. Berlin. Ms. Or, ect. 446, 175 ա. (ժէ)

3. Տաղ աղօթական առ սուրբ Աստուածածին: Զեռագ. Berlin. Ms, or. oct. 446, 176 Բ. (ժէ). Վիեննայի Մխիթ. Մատ. № 577. 3 ա. (ժՀ):

4. Տաղ Աստուածածնի Ասապովի ասացեալ: Զեռագր. լրատ կարենյան ցուց.] № 2339, 461 ա. (ժէ):

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1418. Ալիշան Ղ. — Հուշիկք հայրենյաց հայոց: Վենետիկ. 1870. էջ 125.

1419. Ալիեյան Ն. — Ասապով ժէ դարու (1670) տաղասաց մը: Հանդ. Ամս. 1931. էջ 527—531.

1420. Անառյան Հ. — Յուշակ հայ ձեռ. Թավրիզի: Վիեննա. 1910. էջ 12.

ՀՈՎՆԱԹԱՆ ՆԱԶԱԾ

Ծանոթ է 1661 թ. Սիսիանի Երնջակ գավառի Շոութ գյուղում. (Նախիջևանի ավտոնոմ ՍՍՌ) Նախնական կրթությունն

ստացել է հոր մոտ, հետագայում սովորել է Ազուլիսի Թովմա առաքյալի վանքի հայտնի դպրոցում: Նա այդտեղ սովորել է լեզու, քերականություն, պարսկերեն, աստվածաբանություն. հետագայում էլ նույն դպրոցի ուսուցիչ է եղել:

1680-ական թվականներից Հովնաթան Նաղաշը սկսել է գրել «Ծիծաղական» ոտանավորներ, տաղեր և միաժամանակ երգել է քամանչայի ձայնակցությամբ: Բացի բանաստեղծ լինելուց, Հովնաթան Նաղաշը եղել է որմնանկարիչ, պատկերներ և ծաղկանկարներ է նկարել: 1710 թվից ասյրելով Թրիլիսիում, իրրե հրգիչ-երաժիշտ, նկարիչ, սիրտ կապ է ունեցել Վախթանգ 6-րդի պալատի հետ: Թրիլիսիում Հովնաթանը ունեցել է «քյարխանա», իր ասելով՝ նկարել է «գողալներու» պատկերները: 1723 թվին վերադարձել է իր հայրենի Շոռթ գյուղը և նույն տարին էլ մեռել:

Հովնաթան Նաղաշի հայտնի ոտանավորների թիվը 70—80-ի է հասնում՝ ցրված տարբեր ձեռագրերում: Նրա երգերի, տաղերի մեծ մասի նյութը—սերն է: Երկիծաքանական երգերում Հովնաթան Նաղաշը ծաղրում է՝ շրջապատի բացերը, կղերի տգիտությունը, շահամոլությունը: Հովնաթան Նաղաշի ազդեցությունն ուժեղ է եղել իր որդի Հակոբ Նաղաշի և հետագա շրջանի բանաստեղծների վրա:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

421 Մկրյան Մ.— XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն: Ընտիր նմուշներ: Երևան, 1938. էջ 235—270: Տպագրված են հետևյալ երգերը:—1) Տաղ սիրոյ. «Նման ես կարմիր վարդի»:—2) Տաղ սիրոյ. «Այսօր ծագեցաւ նոր արե...»—3) Տաղ սիրոյ. «Նոր ծաղկեցավ այգին...»:—4) Տաղ սիրոյ... «Նոր գարուն է, հնչեաց հարաւ...»:—5) Տաղ սիրոյ... «Պատկեր մի տեսի լուսնի նման...»:—6) Տաղ սիրոյ... «Եկ գընամք պաղչեն...»:—7) Տաղ սիրոյ. «Այսօր եղև պայծառ արե...»:—8) Տաղ սիրոյ. «Ուստի կուգաս քաղցր ըլրուլ...»:—9) Տաղ սիրոյ. «Քանի՜ կանչեմ աման աման...»:—10) Տաղ սիրոյ. «Լուսնի նման պայծառ երես ըլորած...»:—11) Տաղ սիրոյ. «Քաղաք ես խութայի Մոսքով»:—12) Տաղ սիրոյ. «Ամէն առաւոտ կուգաս ծաղկներով»:—13) Տաղ ի վերայ Գուրջստանայ գողալներին...: Գովեմ սրտիւ ուրախական...:—14) Տաղ ի վերայ գարնան և ուրախութեան.

«Յորժամ եղև գարուն, արև ծագեցաւ...»—15. Տաղ սիրոյ.
«Առաւօտուց մէկ մի տեսայ զարդարած...»— 16. Տաղ ի վերայ
Այվազին ջրաղացին. «Յամենայն ժամ տաքուկ փառս տեսուն
Աստուծոյ...»—17. Տաղ ուրախութեան. «Յաւուրս՝ զարնան ժա-
մանակին...»—18. Տաղ ուրախութեան ի վերայ սեղանոյ. «Յորժամ
որ մարդասէրն Աստուած...»— 19. Օրհնութիւն գեղացի իրիցի
«Օրհնեցի շորեքանկիւնի տունս...»— 20. Տաղ ի վերայ մածունին
գոր ընծայ բերին Նաղաշ Յովնաթանին. «Յանկարծ լըւայ աւե-
տեաց ձայն...»— 21. Գովասանութիւն Երևանայ քաղաքին.
«Կամիք գովել դուք Երևան...»—22. Վարք հաւասար մոնթերին.
«Գրէ եկին էշի քարվան...»:

14². Նաղաշ Հովնաթան.—Աշուղը և Հովնաթանյան Հովնա-
թան նկարիչը: Փարիզ. 1910. 123 էջ²:

Բովանդակութիւն.—1. «Իմ եարըն նըստել դամով...»—2. «Նոր
տեսա մեկ նոր սիրելի...»—3. «Նման ես կարմիր վարդի...»—4.
«Այսօր ծագեցաւ նոր արև...»—5. «Այսօր ծագեցաւ այդին...»—6.
«Նոր գարուն է...»—7. «Պատկեր մի տեսի...»—8. «Գարուն
եղև...»—9. «Եկ զընամք պաղչէն...»—10. «Յասնեցաւ դա-
րուն...»—11. «Նաղելի ծաղիկ...»—12. Գովելի ծաղիկ ես դու...»—
3. «Այսօր ինձ խիտտ պատուական է...»— 14. «Ամէն առաւօտ
կուգաս ծաղկներով...»— 15. «Մանուշակ բանաւշա սըմբուլ...»—
116. «Գեղեցիկ պատկեր...»— 17 «Այսօր եղև պայծառ արև...»—
18. Ուստի կուգաս քաղցր բլրով...»— 19. «Բանի կանչեմ աման
աման...»—20. «Գարուն որ եղև ամսոյն ապրիլի...»—21. «Լուսնի
նման պայծառ երևա...»—22. «Գաղաք ես Խութայի Մոսքով...»—
23. «Առաւօտուց մէկ մի տեսայ զարդարած...»— 24. «Այսօր
յնծամք պարելով...»— 25. «Կանչեմ ֆիղան ահուղարով...»—26.
«Տաղ բուն բարիկենդանի...»— 27. «Եկայք այսօր Ելեալ ես այ-
վան...»— 28. «Տաղ առ Տիրամայրն. «Յամմարմնոց վերօրին-
եալ...»— 29. «Տաղ ի վերայ Այվազին Ջրաղացին. «Յամեն ժամ...»—
— 30. Խրատ սխտանի վասն հողւոյ. «Փառք և զոյութիւն...»—
31. Տաղ ուրախութեան. «Յաւուրս զարնան ժամանակին...»— 32.
Ոտանաւոր ասացեալ ի Նաղաշ Յովնաթանէ ի վերայ կատուին և
մկանց. «Կատուն մեռաւ...» 33.—Տաղ ուրախութեան. «Նստեմք ի
մեջիս...»— 34. «Աղօթք և տաղ գովասանութեան առ. ս. Աս-
տուածածին. «Ամենօրհնեալ Աստուածածին...».— 35. Տաղ ու-

*) Որոշ տաղեր վերը հիշված են:

քախութեան սեղանոյ. «Յորժամ մատուցուք...»—36. Տաղ սիրոյ. «Առաւօտուց գամ քո տեսուն»— 37. Տաղ ուրախութեան ի վերայ սեղանոյ. «Յորժամ որ մարգարէն...»— 38. Տաղ սիրոյ. «Ասել ես թե գարնան վախտը...»— 39. Տաղ ուրախութեան սեղանոյ. «Եկայք այսօր ժողովեցէք...»—40. Տաղ բուն բարեկենդանին. «Այսօր խիստ օր է...»— 41. Տաղ ի վերայ մածունին զոր ընծայ բերին Նաղաշ Յովնաթանին.»— Յանկարծ լա աւետեաց ձայն...» 42. Գովասանութիւն Երեանայ քաղաքին. «Կամեք գովել զուք Երեան»։— 43. Վարք հաւասար մոնթերին. «Գրէ եկին էշի քարվան...»— 44. Տաղ ի վերայ Զատկին հայոց. «Յորժամ գայ սլայծառ Զատիկ...»—45. Տաղ ի վերայ Գուրջատանայ գողալներին. «Գովիմ սըրտիս ուրախական»։— 46. Տաղ ի վերայ գարնան և ուրախութեան. «Յորժամ եղև գարուն...»։

ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

1423. Антология Армянской поэзии с древнейших времен до наших дней. Под редакцией С. С. Арутюнян и В. Я. Кирпотина. Гос. изд. „Художественная литература“. Москва. 1940. стр. 304—312. [Нагаш Овнатан. Песня любви. Пер. В. Брюсова.—2. Нег покоя мне. Пер. В. Брюсова:—3. Мпая, сжался. Пер. В. Брюсова:—4. Моя возлюбленная. Пер. С. Спасского:—5. Жестокый друг. Пер. Вс. Рождественского: —6. Песня о грузинских красавицах. Пер. П. Панченко:—7. Песня весны и радости. Пер. С. Спасского].

ՌՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1424. Ակինյան Ն.—Հովնաթան Նաղաշ և Նաղաշ Հովնաթանյանք և իրենց բանաստեղծական ու նկարչական աշխատությունք։ Հանդ. Ամս. 1911, էջ 211—231, 390—410։ Առանձին զրքով, Վիեննա 1911։

1424 ա. Լեոնյան Գ.—Նաղաշ Հովնաթան աշուղը։ Աղգադրակ. հանդես. 1911, գիրք XXI, էջ. 226—235։

1425. Լեոնյան Գ.—Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ։ Սովետ. արվեստ. 1938, № 1, էջ 50—55։ № 2, էջ 24—29, № 4, էջ 51—55։

1426. Հայ գրականության սլատմություն։ Պատրաստել է ՍՍՌԽ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Գրականության և Լեզվի Ինստիտուտի բրիգադը։ Թույլատրված է ՀՍՍՌ Լուսժողկոմատի կողմից որպես դասագիրք միջնակարգ դպրոց-

ների VIII դասարանի համար: Ընդհանուր խմբագրությամ-
ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի խմբ-
ագրական հանձնաժողովի: Երևան. Հայպետհրատ. 1940. էջ 162—
166.

Գիրք 1. Մկրյան Մկրտիչ (ֆիլոլոգիական գիտ. թեկն) Ա.
«Հին շրջան» և «Միջին շրջան»: Ջարյան Ռուբեն. (ֆիլոլոգիակ-
գիտ. թեկն.) Բ. «Նոր շրջան»-ի «Հայ գրականությունը XIX
դարի առաջին հիսնամյակում» բաժինը]. Խմբ. պրոֆ. Հով. Մե-
լիքյանի և Խորեն Սարգսյանի:

1427 Պոտուրյան Մ.—Հովնաթան Նաղաշ Շոտութեցի
Բազմավեպ. էջ 173—174:

ՆԱՂԱՅ ՀԱՎՈՐ

Նաղաշ Հակոբը Հովնաթան Նաղաշի որդին էր. ծնվել է 1730
թվին, ժամանակակից է եղել Սայաթ Նովային: Բացի նկարիչ-
լինելուց, Հակոբ Նաղաշը նաև բանաստեղծ է. գրել է 30-ի չափ
սիրո տաղեր, որ մեծ մասով անտիպ են:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1428. Մկրյան Մ.—XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրա-
կանությունը: Երևան. 1938. էջ 271—274. իկան հետևյալ ոտանա-
նավորը. Ողբերգութիւն յաղագս մահուան դեղեցկարուէստ վար-
պետ Նաղաշ Հովնաթանին, որ ՌՃՀԱ, թւոջ հոկտեմբերի ԻԸ՝ վերա-
ցաւ առ Տէր ի յիւրում գաւառի, ասացեալ յորդուոյն իւրոյ Յա-
կոբայ. «Ողբամ արտասուօք կոծով տխրության...»:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1429. Արութչյան Ս.—Մի քանի խոսք Հակոբ Հովնաթանի
մասին: Նորք. Երևան. 1928. № 1:

1429 ա. Լևոնյան Գ.—Հովնաթանյան Նաղաշները հայ նկար-
չության պատմության մեջ: Սովետ. արվեստ. 1938. № 4. էջ 51—55

ՊԱՂԴԱՍԱՐ ԴՊԻՐ

Պաղղասար Դպիրը ծնվել է Կ. Պոլսում 1680 թ. վերջերին Սկզբում եղել է արհեստավոր (կոշկակար)։ 1707 թվից աշակերտել է ժամանակի հայտնի գործիչներից Աստվածատուր վարդապետի (հետո կաթողիկոս) մոտ և իր եռանդուն աշխատանքների միջոցով դառել է հայտնի հայկաբան, քերական, ուսուցիչ, բանաստեղծ։ Նա Կ. Պոլսի հայ հասարակական կյանքին խոշոր մասնակցություն է ունեցել, գրադրություն է ունեցել ժամանակի հայտնի գործիչների հետ։

Պաղղասար Դպիրը թողել է հարուստ գրական ժառանգություն։ Նա գրել է քերականություն 2 հատորով՝ ա) «Պարզարանություն քերականության կարճառօտ և Դիւրիմաց։ Յաղագս նոր եկելոց ի Ուսումն Գրոց զիտութեան», բ) «Կիրառութիւն Մասանցն Բանին։ Որ է Շարամանումն ընդ իրեարս ըստ քերթողացն»։ Այս աշխատություններով Պաղղասար դպիրը հայագետի, լեզվագետի անուն է ստեղծում, իսկ այդ ժամանակներում դա համազոր էր՝ փիլիսոփայի, քերթողի անվան։

Պաղղասար Դպիրը գրել է նույնպես տաղեր. նրա տաղարանը ունեցել է երեք հրատարակություն (1723, 1734, 1768 թվերին)։ Կրգերի մի մասը հոգևոր են՝ սաղմոսներ, ձոներ, օղաներ։ Այստեղից երգերը սիրային են, բնության նկարագրեր, անձնական-անհատական, խրատական-բարոյախոսական։

Տաղերը գրում է 5, 6, իսկ երբեմն ավել տոներից. լեզուն աշխարհարար է, ժամանակի դրաբարախառը մի լեզու, բայց միաժամանակ՝ պարզ, պոետիկ, պատկերավոր։ Երգերը հարմարեցված են որոշ եղանակների։

Պաղղասար Դպրի երգերը մեծ մասով տխուր են, թախժալի, նա դժգոհ է կյանքից, շրջապատից. («Սիրտ իմ ընդեր տրտում եղեալ...» էջ 93 և լն...)։ Նրա երգերից երևում է, որ կղերի և աղաների կողմից հալածանքի է ենթարկվել։ Տաղաչափություն մասին Գ. Լևոնյանն ասում է*։ «Պաղղասարը միջնադարյան տաղասացների շարունակությունն է, գուցե վերջին ներկայացուցիչը մի կողմից, արևելյան աշուղական երգերի տաղաչափական օրենքները հայոց մեջ առաջին կիրառողը՝ մյուս կող-

*) Լևոնյան Գ.—Պաղղասար Դպիր քերական, բանաստեղծ և երաժիշտ. Տեղեկագիր ՀՍՍՄ Դիտություն և Արվեստի Ինստիտուտի, Երևան, 1927, № 2, էջ 120։

մից: Շարականներ, հոգևոր «զանձ»-եր՝ մի կողմից, աշուղական մուխամազներ ու դիվանիներ մյուս կողմից. մեր բանաստեղծը պատկանում է ուրեմն այդ փոխանցիկ շրջանին. նա իր շատ երգերով մի տաղասաց է, ինչպես մի Թլկուրանցի, մի Ախթամարցի և շատ երգերով էլ մի աշուղ, ինչպես մի Շիրին մի Զիվանի»:

Գ. Լևոնյանը հիմք ունենալով որոշ տեղեկություններ, գտնում է, որ Պաղղասար Դպիրը եղել է տեսաբան արևելյան օսմանյան եղանակների և երգիչ երաժիշտ: Այս բանը քննության կարոտ է:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1430. Տաղարան փոքրիկ: Պաղղասար Դպրի ասացեալ զանազան գունով: Կ. Պոլիս. 1723:

1431. Տաղարան փոքրիկ: Պաղղասար Դպրի ասացեալ զանազան գունով: Կ. Պոլիս. Բ. տպագ. 1734:

1432. Տաղարան փոքրիկ: Պաղղասար Դպրի ասացեալ զանազան գունով: Կ. Պոլիս. Գ. տպագ. 1768, 128 էջ [64 տաղ]:

1433. Դրժուլի որ կոչի ցանկ գիրք նոր կտակարանին: Կ. Պոլիս. 1753. 178 էջ:

1434. Պարզաբանութիւն Քերականութեան Կարճառոտ և Դիւրիմաց Յաղագս նոր եկելոց ի Ուսումն Դրոյ Դիտութեան: Օգնեալ ԱԾ. Կ. Պոլիս. 1771. [304 էջ]: Հատոր երկրորդ. Կիրառութիւն մասանցն բանին: Որ է շարամանումն ընդ իրեարս ըստ քերթողացն: Կ. Պոլիս. 1771. [305—608 էջ]:

1435. Դիրք Քերականութեան շարադրեալ ի տիրացու Բաղղասար Դպրէ Կոստանդնուպօլսեցւոյ. եւ ի նմանէ օրինակեցեալ ջանիւք և աշխատութեամբ Տէր Յարութիւն Շմաւոնի Շիրաղեցւոյ:

Մաղրաս. 1791. 608 էջ. [տպ. Տեր-Հարություն Շմափոնյանի | 1 Հատոր]: Պարզաբանութիւն Քերականութեան Կարճառոտ

4. Դիւրիմաց: Յաղագս Նոր եկելոց 'ի Ուսումն Գրոց Գիտութեան.
Օգնեա Ած. [ը եջից մինչև 304 էջը]:

Հատոր երկրորդ. Քերականութիւն Կիրառութիւն Մասանցն
Բանին: Որ է շարամանումն ընդ իրեարս ըստ քերթողացն:
[305—602 էջ և ցանկ]:

1436. Համառոտ մեկնութիւն տրամաբանութեան: Կալկա-
թա. 1822:

1437. Հայ էջեր: Մեր նախնեաց բանաստեղծությունն ու
արվեստը: Հիսուներկու պատկերով: Փարիզ. 1912. 120 էջ:

Բովանդակութիւն: 1.—Տաղ աղնիւ և անուշ. «Մեկ աղնիւ մի
սէրըն կայի գլխիս...»:—2. Տաղ սիրոյ. «Զիս քո սիրոյն, ով նա-
ղիլի...»:—3. Տաղ «Գարունն եկեալ, անուշ հովերն հնչեցին...»:—
4. Տաղ «Ի նընջմանէդ արքայական...»:—5. Տաղ «Զիս ի սէր
կապելով միշտ...»:—6. Տաղ «Օր ահեղ օր ահեղ...»:—7. Տաղ առ ս.
էջմիածին «Հայոց պարծանք...»:—8. Տաղ առ միութիւն. «Ո՞վ
միութիւն դարմանալի...»:—9. Առ մամոնայն. «Ուստի ծնար, թի
բոնաւոր...»:—10. Տաղ առ զգայնութիւնս մեր և այլ մասունս.
«Զարմանալով դարմացայ...», — 11. Տաղ. «Ի կիսատ սիրե-
լեաց...»:—12. Տաղ վերափոխման. «Մարգարիտն լուսափայլ...»:—
13. Վէպ պատահմանց եղկելի հոգւոյս. «Պատահելով գերւոյս...»:—
14. Տաղ զպատահմանց մերոյս բնութեանց. «Սիրտ իմ, ընդէ՞ր
տրտում եղեալ...»:

1438. Քնար Հայկական Խմբագրեց Մ. Մ. Միանսարեան
Ս. Պետերբուրգ. 1868. 590 էջ + 59 էջ:

Պաղղատար Դպիրի տաղերից ղետեղել է՝

1. «Ի ննմանէդ արքայական...»:—2. Տաղ վարդի և սիւլ-
դիւլի. «Պիւլդիւլն նստել էր լալով...»:

ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

1439. Антология армянской поэзии с древнейших времен
до наших дней. Под редакцией С. С. Арутюняна и В. Я. Кир-
потина. Гос. изд. „Художественная литература“. Москва. 1940.
[Багдасар Дипр. Беги с очей, царвни сон! Пер. С. Шервин-
ского.]

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1440. Լեոնյան Գ.—Պաղղասար Դպիր. քերական, բանաստեղծ, երաժիշտ XVIII դարում: Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտության և Արվեստի Ինստիտուտի: Երևան. 1927. № 2, էջ 1—9, [Առանձին. զրքով նույնը՝ Երևան. 1927. 20 էջ]:

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ

Սայաթ Նովան (Հարություն Սայադյան) ծնվել է Թրիլիսում 1712 թ.: Պատանի հասակից նա աշակերտել է Զուհակի մոտ, դառել լավ վարպետ, իսկ հետագայում թողի է արհեստը և ամբողջովին նվիրվել երգ ու նվագին:

Իբրև հաշակավոր աշուղ Սայաթ Նովան մտել է Հերակլ Բ-ի պալատը: «Նվագում էր և միաժամանակ ստեղծագործում էր և գրում զանազան երգեր» (Գ. Լեոնիձե): Ընդհարվելով պալատական միջավայրի հետ, հեռացվում է պալատից: 1768 թվին, կնոջ մահից հետո, Սայաթ Նովան մտնում է Հաղպատի վանքը, դառնում արևդա:

Սայաթ Նովան երբեք չի հաշտվել վանական կյանքի հետ, նրա հոգին միշտ աշխարհիկ ձգտումներ է ունեցել:

1795 թ. Սայաթ Նովան սպանվել է Աղա Մահմեդ Խանի՝ Թրիլիսիի վրա կատարած արշավանքի ժամանակ: Սայաթ Նովան ստեղծագործել է՝ հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն: Նա տվել է այնպիսի բանաստեղծական գոհարներ, որ իրենց հուզականությամբ, պաղափարական բարձրությամբ, բարձր արվեստով, հեղինակին դարձրել են համաշխարհային գրականության փայլուն դեմքերից մեկը:

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ

1441. Գուսանֆ. Ա. Սայաթ Նովա. լույս գցած աշխատասիրութենով Գեորգևա Ախվերդեան: Մոսկվա. 1852. ԻԵ+172 էջ [46 խաղ]:

1442. Սայաթ Նովա. ազգային երգիչ (աշուղ): Թիֆլիսի ընկ. հայերեն գրքերի հրատարակություն: Թիֆլիս. 1882. [20 խաղ]:

1443. Սայաթ Նովա. Հրատ. Հայ գրողների կովկասյան ընկ., Թիֆլիս. 1914:

1444. Սայաթ Նովա. Հայերեն խաղերի լիակատար ժողովածու: Երևան. Պետհրատ. 1931. 196 էջ. [46 խաղ Գ. Ախվերդյանի հրատարակությունից, 8 խաղ Գ. Ասատուրի հայտաբերածից, 6 խաղ զանազան աղբյուրներից]:

1445. Սայաթ Նովա. Հայերեն խաղերի լիակատար ժողովածու: Առաջաբանով և բառարանով. խմբագրություն Գ. Լևոնյանի: Երևան. Պետհրատ. 1935 118 էջ:

Բովանդակություն.—ա. Ամէն սաղի մէջըն պոված դուն թա մամ:—բ. Թէգուղ քու քաշըն մարքրիտ տան:—գ. Արի ինձ ան պաճ կալ:—դ. Վունց որ դարի քուլբուլըն:—ե. Մե խօսկ ունիմ իլթիմազով:—զ. Մեջլումի պե կորավ յարըս:—է. Առանց քեզ ին կոնիմ:—ը. Դուն է՛ն գըլխեն ի մաստուն իս:—թ. Ես մի դարիք քուլբուլի պէս:—ժ. Ուստի՞ դուրաս դարիք քուլբուլ:—ժա. Սոսքերըդ մալում եմ արի:—ժբ. Շատ մարթ կոսէ՛ ես յարեմէն:—ժգ. Ինձ ու իմ սիրեկան ետրին:—ժդ. Էնդուր աչկըս չէ ցամաքում:—ժե. Չիս ասում թե լաց էս էլի:—ժզ. Ջենրդ քաղցր ունիս:—ժէ. Էսօր իմ յարիս տեսա:—ժը. Աշխարումս ախ չիմ քաշի:—ժթ. Ինձ սիրեցիր, էշխըն նընդար:—ի. Ի՞նչ կոնիմ հեքիմըն:—իա. Անդին ազըն վըրեդ շարած:—իբ. Էշխեմէդ հիվանդացիլ եմ:—իգ. Շատ սիրուն ես Շախաթայի:—իդ. Ես քու դիմեթըն չեմ պիտի:—իե. Թամամ աշխար պտուտ եկա:—իզ. Գուդիմ ումըըս հենց անցկացնիմ:—իէ. Դուն է՛ն հուրին իս որ դեմի կու զսովթէ:—իր. Աջար քու սիրտըն մի շինից: իթ. Դարդ



Սայաթ Նովա

մի անի, ջան ու ջիգար:—լ. Դիրա ու նեգիդունիա, զարբար ու
զար:—լա. էշխըն վառ կըրակ է:—լր. Արի համով դուլուդ արա:—
լգ. Բըլբուլի հիդ լադ իս էլի:—լդ. Աշխարըս մի փանջարա է:—
լե. Պատկիրքըդ դալամով քաշած:—լզ. էշխեմէն էնպես վառվիլ
իմ:—լէ. Բէդասըլին վուր խոսեցնիս:—լը. էշխեմէդ անդանակ
էլա:—լթ. Աջար քանի ժամանակ է:—խ. Դաստամաղըդ սիմ ու
շարբաթ:—խա. Եար, քիզ իսկի գալիս չըլի:—խբ. Քանի վուր
ջան իմ:—իգ. Մօտըդ նստողըն կու հարփի:—խզ. Անգաջ արա
բարիթավուր:—խե. Ես կանչում եմ լալանին:—խզ. Խըմեցուր
ձեռիդ թասէմէն:—խէ. Աչկ ու ունքըդ վիր իս թողի:—խը. Հնդկաց
քաղաքիցն հանած:—խթ. Է՛յ բեմուրսդ, մի սըպանի:—ծ. Խարար
պնաց բուլբուլի մօտ:—ծա. Փահրատըն մեռած Շիրին ասաց:—
ծբ. Այրըն աստուած սիրէս:—ծգ. Այրիմըն կարդացիլ իմ:—ծդ.
Մտա էշխիդ քուրէն:—ծե. Թաքաուրիս, դիվանս արա—ծզ. Գէլն
ու չորանը մէկս մէկու:—ծէ. Մախուխը ու ոչխարի միսը:—ծը.
Հիմքըդ վերստին նուրեցին:—ծթ. Ամէն մի մտիկ տալով տարալ
խելքս:—կ. Մազիր ունիս դաստառ ունան:

ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1446. **Поэзия Армении**, с древнейших времен до наших дней, в переводе русских поэтов. Под ред. с вступительн. очерком и примечаниями Валерий Брюсова. Москва. 1916. стр. 247—258.

1447. „**Моя мечта всегда с тобой...**“ Пер. Е. Сырейщикова. Армянск. вестник. Москва. 1916. № 29, стр. 9.

1448. „**Мрачна** моя душа, мрачна и песнь моя“. Пер. Е. Сырейщикова. Армянский вестник. 1916. № 7. стр. 6.

1449. „К тебе есть слово у меня, к тебе иду с мольбой мой свет“. Пер. Е. Сырейщикова, Армянский вестник. 1916. № 8. стр. 4.

1450. „Ты как роза, расцветала...“. Пер. Шарті. Армянский вестник. 1916. № 12—13. стр. 10.

1451. Антология армянской поэзии с древнейших времен до наших дней. Под редакцией С. С. Арутюняна и В. Я. Кирпотина. Гос. изд. „Художественная литература“. Москва. 1940. стр. 325—338.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1452. Այվազյան Գաբրիել.—Պարոն Գևորգ Ախվերդյան: Ազգային ոամկական երգ Սայաթ Նովա բանաստեղծին: Մասյաց աղափնի. 1855. № 8. էջ 169—173:

1453. Ասատուր Գևորգ.—Սայաթ Նովայի անհայտ երգերից: Ազդագրակ. հանդ. Թիֆլիս. 1903. էջ 94—112 [8 նոր խաղ և մի քանի խաղերի նոր վարիանտներ]:

1454. Ասատուր Գևորգ.—Սայաթ Նովայի ձեռագիր մատյանը: Բանբեր Հայաստ. գիտ. ինստ-ի. գիրք Ա—Բ. 1911—1927. էջմիածին. էջ 230:

1455. Ասատուր Գևորգ.—Սայաթ Նովայի հարցը: [Լեոյի հոգվածի առթիվ]: Խորհրդ. Հայաստ. 11—IV 1926. (№ 85 և № 88):

1456. Բաշինջաղյան Գ.—Սայաթ-Նովայի թուրքերեն բանաստեղծությունները: Մարտակոչ. 1924. № 181:

1457. Բեկնազարյան Ապրես.—Գաղտնիք Ղարաբաղի: Մոսկվա. 1886. էջ 166:

1458. Փրիգորյան Գր.—Սայաթ Նովայի վրացերեն երգերը: Դրակ. գեղարվ. Ալմանախ. Թիֆլիս. 1919. № 5. էջ 43—49:

1459. Երեմյան Ա.—Հայ աշուղներ: Սայաթ Նովա: Բաղմավեպ. 1903. № 10. էջ 431—436:

1460. Ջարպեանալյան Գ.—Պատմություն հայ դպրության: Բ. Նոր մատենագրություն: Վենետիկ. 1905:

1461. Թումանյան Հով.—Երկու մեծ թիֆլիսցիներ. (Սայաթ-Նովա և Գ. Սունդուկյան): Հորիզոն. 14—III 1913:

1462. Թումանյան Հով.—Սայաթ Նովայի երգերի բնավորությունը: Հորիզոն. 25—V 1913:

1463. Թումանյան Հով.—Սայաթ Նովան, Դավիթ Եպիսկոպոս և առաջնորդ Հաղպատա թեմի: Հորիզոն. 8—VII 1913:

1464. Թումանյան Հով.—Քուչակ Նահապետի և Սայաթ Նովայի ուեսերեն թարգ. առթիվ: Հորիզոն 26—XI 1915:

1465. Թումանյան Հով.—Հայ գրողների Կովկ. ընկ. երեկույթները: [Հով. Թումանյանի և Լեոյի զեկուցումները]: Հորիզոն. 8—XII 1913:

1466. Լեո.—Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը: Վենետիկ. 1904. 413 էջ:

1467. Լեո.—Սայաթ Նովայի հարցը: Սովետ. Հայաստ. 3—I, 25—I, 14—II, 1926:

1468. Լևոնյան Գ.—Հայ աշուղներ: Ալեքսանդրապոլ. 1892. էջ 16—18:

1469. Լևոնյան Գ.—Աշուղների մասին պատմական-քննական հայացք: Ազգագրակ. հանդ. Թիֆլիս. 1903. գիրք X. էջ 39—93:

1470. Լևոնյան Գ.—Հայ աշուղներ: Ազգագրակ. հանդ. Թիֆլիս. 1903. գիրք XI. էջ 129—196, 1904. գիրք XII. էջ 84—94, 1906. գիրք XIII. էջ 87—112:

1471. Լևոնյան Գ.—Հայ ժողովրդական և աշուղական երգերը: Համեմատական տեսություն: Տեղեկագիր Գիտ. և Արվեստի ինստ-ի, Երևան. 1929. գիրք Դ. էջ 160—178:

1472. Курбаниян А.—Крупнейший армянский поэт средневековья. Коммунист. (Ереван), 23—VI 1938.

1473. Курбаниян А.—Материалы к биографии Саят-Нова. (По вновь найденным армянск. и тюркск. песням ашуга). Коммунист. Ереван). 4—IV 1937.

1474. Հարությունյան Սուր.—Սայաթ Նովա:]Գրախ.]: Գրակ. թերթ. 30/V 1932:

1475. Հարությունյան Սուր.—Սայաթ Նովա: Գրակ. թերթ. 31—I 1936:

1476. Մանանդյան Հակ. և Անառյան Հ.—Աշուղ Հարություն Տփլիսեցի. (Սայաթ Նովա). Հայոց նոր վկաները. Վաղարշապատ. 1903. էջ 609—619:

1477. Մելիֆսեթբեկյան Լևոն.—Հայերը վրաց հին գրականության մէջ: Գեղարվեստ. 1921. էջ 34—49 (№ 71):

1478. Միանսարյան Սիֆայել.—Քնար հայկական: Ս. Պետերբուրգ. 1868:

1479. Պատկանյան Գաբրիել.—Աղգային նվագարան և աղգային քնար: Արարատ. 1851:

ԽՍՐԱՅԵԼ ՕՐԻ

Իսրայել Օրին հայ քաղաքական գործիչ է: Գործել է XVІІ դ. վերջում, XVІІІ դ. սկզբներում: Նա Ղարաբաղի և առհասարակ հայ անցյալ քաղաքական շարժման մեջ նշանավոր դեր է խաղացել:

Իսրայել Օրին, քանի դեռ ծանոթ չէր երոսդական պետութ-
 թյունների քաղաքական շահերին, հույս ունեւ, որ Պֆալցի
 Կուրֆյուրստի և Ավստրիայի կայսեր միջոցով կհաջողվի Հայաս-
 տանի ազատագրումը, իսկ երբ ըմբռնեց երոսդական դիվանա-
 գիտական խորամանկությունները և մյուս կողմից ծանոթացավ
 այն ժամանակաշրջանի ոռւսական քաղաքականությունը, եկավ
 այն համոզմանը, որ Ռուսաստանը կոչված է խոշոր դեր խաղա-
 լու Արեւելքում. ոռւսի և Հայաստանի ազատագրման իր ծրագիրը
 կապեց Ռուսաստանի հետ:

Իսրայել Օրին Պետրոս Մեծի հետ քաղաքական բանակ-
 ցությունների մեջ մտավ, իրրև Հայաստանի մելիքների ներ-
 կայացուցիչ: Այդ բանակցություններին և ընդհանրապես Իսրա-
 յել Օրու պործունեությանն է նվիրված Կարապետ Եղլանի ներ-
 քում հիշատակվող գործը, որ հիմնականում փաստաթղթերի մի
 ժողովածու է:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1480. Эзов Г. А.—Сношения Петра Великого с армянским
 народом. Документы извлеченные из Московского главного и
 Санкт-Петербургского архивов министерства иностранных дел,
 Австрийского придворного и Госуд. архива. Королевско-Бавар-
 ского тайного государственного архива и других учреждений.
 С. Петербург. 1898.

ՈՒՍՈՒՄ ՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1481. Լեո.—Հայկական տպագրություն: Մեր կյանքը և
 գրականությունը անցյալում: Հատ. I. Թիֆլիս. 1901, էջ 420—
 451. հտ. Բ. էջ 222—298:

1482. Հովսեփյան Գ.—Խաղրակյանք կամ Պոռչյանք Հայոց
 պատմության մեջ: Վաղարշապատ. 1928. էջ 269—290:

1483. Լեո.—Հայոց պատմություն նորագույն շրջան: Մասն
 I. Երևան. 1926. էջ 71—74:

1484. Эзов Г. А.—Сношения Петра Великого с армянским
 народом. Документы извлеченные из Московского главного и
 Санкт-Петербургского архивов министерства иностранных дел,
 Австрийского придворного и Государств. архива, Королевск.

Баварского тайного государственного архива и других учреждений. С. Петербург. 1899. [*Մեսրոպ վարդապ. Արարատ. 1898. էջ 536—543. — գրախոսակ.*]

1485. Պոզոսյան Ա.—Հայ ժողովրդի պատմութիւն, (Սղազըր-ված դասախոսութիւն. ձեռագրի իրավունքով): Պրակ V. Երևան. Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական լսարանի հրատ. 1941. էջ. 77—109.

1486. Օրմանյան Մ. Էսպ.—Ազգապատում: Հայ ուղղափ. եկեղեցւոյ անցքերը սկզբնէն մինչև մեր օրերը հարակից ազգային պարագաներով պատմւած: Հտ. Բ. էջ 2684—2692, 2771—2777.

ԱՐՐԱՆՈՒ ԵՐԵՎԱՆՅԻ

Արրանամ Երևանցի XVІІІ դարի պատմագիր է: Նրա երկն ընդգրկում է 17¹¹—1736 թ. ժամանակաշրջանի պատմութիւնը և նկարագրում է թուրք-օսմանցիների մղած պատերազմները, որ տեղի են ունեցել Սուլթան Մահմուդի պարսկական Շահ-Սուլթան-Հուսէյնի դեմ կատարած արշավանքներից հետո: Հետաքրքիր են նրա հաղորդած մանրամասը տեղեկութիւնները Կարրի գյուղաքաղաքի և Երևանի քաղաքի գրավման մասին՝ 1721—1736 թ. թ.:

Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի XVІІІ դարի պատմութեան համար կարևոր աղբյուր է Արրանամ Երևանցու պատմութիւնը:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1487. Սրբաեամ Երևանցի.—Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թ. Երևան. Արմֆան. 1938. 108 էջ: (ՍՍՌՄ Գիտութիւնների Ակադեմիայի Հայկական ֆիլիալ):

ԹԱՐԴՄԱՆՈՒԹՅՈՒՆ

1488. Абраам Ерзванци.—История войн. 1721—1736 г. г. Ереван. Армфан. 1939. 92 стр. (Академия Наук. СССР. Армянский филиал. Институт Истории и материальной культуры).

ՊԵՏՐՈՍ ԴԻ ՍԱՐԳԻՍ ԳԻԼԱՆԵՆՑ

Պետրոս Դի Սարգիս Գիլանենցը 1720-ական թվականներին սկզբին Պարսկաստանի ժամանակակից դեպքերի և հայոց քաղաքական շարժման մասին օրագրի ձևով կազմել է ընդարձակ տեղեկագիր: Նա իր «Յիշատակարան Սպահանը Աւղանների կողմից պաշարելու մասին» գրել է 1722—1723 թ. թ. և ապրելով Ռաշտում, իր հավաքած տեղեկությունները ուսուցիչներին հաղորդել է Աստրախան՝ բրիգադի հրամանատար Լևաշին, որը Պետրոս Մեծի կողմից նշանակված էր հետևելու Պարսկաստանում կատարվող դեպքերին:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1489. Փամանակագրութիւն Պետրոս Դի Սարգիս Գիլանենցի, ջողայեցւոց բարրառով գրված: Կոռնկ հայոց աշխարհին: [Տփղիս]—1863. փետրվ.—մարտ. էջ 81—112, 181—212:

ՌՈՒՍԵՐԵՆ

1490. **Дневник** осады Иснагана Афганам, веденный Петром ди Саркис Гилянцем в 1722 и 1723 годах. Матералы для истории Персии. Перевел и объяснил К. Патканов. (Прилож. к XVIII тому записок Имп. Акад. Наук. № 3. р. р. XXXII + 57 стр. С. Петербург. 1870.

ՌՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1490 ա. **В. Т.**—Петрос ди Саргис Гилянцем. Армянск. вестник. Москва. 1916. № 27. стр. 7—9.

1491. **Эзов К.**—Сношение Петра Великого с армянским народом. Документы извлеченные из Московского главного и Санкт-Петербургского архивов министерства иностранных дел Австрийского придворного и государственного архива, Королевского-Баварского тайного гос. архива и других учреждений. С. Петербург. 1898. [Введение LXI—LXIII].

1492. **Патканов К.**—Библиографический очерк армянской исторической литературы. С. Петербург. 1879.

1493. Ընդ.—Հայկական տպագրություն: Մեր կյանքը և զրահանությունը անցյալում: Թիֆլիս. 1901. Բ. հտ. էջ 329—331.

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴԱՆԻՍՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

Ստեփանոս Վրդանեսի Շահումյանը սնձամբ մասնակցել է Դավիթ Բեդի մղած կռիվներին և բավական աչքի ընկնող դեր է կատարել: Դավիթ Բեդի ազատազրական կռիվներից հետո, նա չի մոռացել իրենց հայրենիքը հերոսաբար պաշտպանող հերոս ընկերներին և իր տեսածն ու լսածը թելադրել է Ղուկաս Սերաստացուն՝ Վենետիկում, և այդ պատմածներից հյուսվել է մի շատ կարևոր պատմական գործ, Դավիթ Բեդի պատմությունը:

ՏՊԱԳՐՎԵԼ Է

1494. Ընտիր պատմութիւն Դավիթ Բեդին և պատերազմացն Հայոց Խափանու, որք եղեն ընդդէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722, և Հայոց 1171 թ. Զորս ետուն գրել՝ որք ի սկզբանէ մինչ ցվախճան յառաջագեմ լեալք էին յամենայն պատերազմունս, և ականատես իրացն եղելոց. այսինքն Ստեփաննոս Վրդանեսեան, որ ի տանէն էր Շահումեան, ի դաւառէն Փոքր Սիւնեաց, և յաւանէն Եկտաստանաց, և այլ ոմանք ընդ նմա... [Հրատ. Արգար Գուլամիրյանց]. 1871. Վաղարշապատ. 136 էջ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1495. Լեո.—Հայկական տպագրություն: Մեր կյանքը, գրականությունը անցյալում: Հտ. II. XVIII դար. Թիֆլիս. 1901. էջ 339—388:

1496. Ղլտնյան Արսեն վրդ.—Նյութեր Դավիթ Բեդի պատմության վերաբերյալ: Արարատ. 1905. էջ 382—391:

1497. Բաֆֆի.—Դավիթ Բեդ. Պատմական վեպ. 1722—1728. Հայպետհրատ. Երևան. 1941. 436 էջ:

1498. Զամչյան Մ.—Պատմություն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784. բոտ աւանդելոյ այլևայլ մատենագրաց. ի վեց գիրս բովանդակեալ, և յերիս հատորս տրոհեալ: Վենետիկ, 1785. հտ. Գ. էջ 789, 792:

1499. Օրմանյան Մ. եպ.—Ազգասպաստում. Հայ ուղղափ. եկեղեցվո անցքերը սկզբեն մինչև մեր օրերը, հարակից աղբային պարագաներով պատմված: Հտ. Բ. Կ. Պոլիս. 1912. էջ 2837—2839, 2858—2862:

ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՎԱՆՑԻ

Սիմեոն Կաթողիկոս Երևանցին (1710/13—1780) ունեցել է եռանդուն շինարարական գործունեություն (էջմիածնում 1771 թ. հիմնել է առաջին տպարանը, թղթի գործարանը և այլն), նորոգել է տոնացույցը, զրել է՝ ա) Բարողգիրք 2 հատոր, բ) Զրոստրան-տաղարան, որ երգերի ու տաղերի ժողովածու է, գ) Միշարք կրոնական-փիլիսոփայական գործեր («Գիրք-պարտավճար», Լուծմունք Արտաքին գրոց Պորփյուրի ներածության և Արիստոտելի Ժ ստորագրությանց և Պերարմենիաս գրքի, Լուծմունք Դավիթ Անյաղթի հինգ առածից և այլն)։

Սիմեոն Կաթողիկոսի երկասիրությունների մեջ արժեքավոր է Զամբռ գիրքը, որ կարևոր տեղեկություններ է տալիս XVIII դարում վանքի և վանքապատկան հարսրերությունների վերաբերյալ։ Նա իր աշխատությունը կազմել է, որպես էջմիածնի «Քեոթուկ»-ը տեղավորելով նրա մեջ բաղմաթիվ վավերագրեր՝ ռադմաններ, ֆերմաններ և այլն։

Պատմական մեծ արժեք ունի նաև Սիմեոն Կաթողիկոսի «Յիշատակարան»-ը։

ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ *

1500. Զամբռ գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպեսութեանց սր. Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, Համաժողովեալ և շարադրեցեալ ի Սիմէօնէ ցաւահար և վշտակոծ Կաթողիկոսէ Երևանցւոյ։ Վաղարշապատ. 1873. 304 էջ։

